ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ

01.2017
02.2017
03.2017
04.2017
05.2017
06.2017
07.2017
08.2017
09.2017
10.2017
11.2017
12.2017
Դեկտեմբեր

ՀՀ կենտրոնական բանկի տեղեկագիր

Թողարկման 24-րդ տարի

ՀՀ կենտրոնական բանկի տեղեկագիր

2017

Դեկտեմբեր

թիվ 12 (232)

Բովանդակություն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԸ

4 «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՕ-216-Ն ՀՀ օրենքը

7 «Հաշվապահական հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՕ-277-Ն ՀՀ օրենքը

8 «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» ՀՕ-282-Ն ՀՀ օրենքը

9 «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ՀՕ-283-Ն ՀՀ օրենքը

10 «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-291-Ն ՀՀ օրենքը

14 «Սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՕ-298-Ն ՀՀ օրենքը

16 «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՕ-308-Ն ՀՀ օրենքը

17 «Հրապարակային սակարկությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՕ-310-Ն ՀՀ օրենքը

19 «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-313-Ն ՀՀ օրենքը

29 «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում և փոփոխություններ կատարելու մասին» ՀՕ-318-Ն ՀՀ օրենքը

30 «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՕ-319-Ն ՀՀ օրենքը

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ
ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ
ԿԲ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

34 ՀՀ ԿԲ խորհրդի որոշումները «ՄԻԿՐՈ ԿԱՊԻՏԱԼ», «ԱՐՍԿԱՐԵ», «ԱՄՈՒՆԻ ԿՐԵԴԻՏ» ՍՊԸ-ների գրավատնային գործունեության իրականացման լիցենզիաները ուժը կորցրած ճանաչելու մասին

34 ՀՀ ԿԲ խորհրդի որոշումները «ՈՍԿԵ ԱԳԱ» ՍՊԸ-ին արտարժույթի առուվաճառքի, փոխանակման կետի մասնաճյուղի լիցենզիաներ տրամադրելու, «ՄոբիԴրամ» ՓԲԸ վճարահաշվարկային կազմակերպության «Վեդի» մասնաճյուղը հաշվառելու, «Զայնք Թրեյդ» ՍՊԸ-ին տրված արտարժույթի առուվաճառքի իրականացման լիցենզիան ուժը կորցրած ճանաչելու, «ԲԼԵՍՍ» ունիվերսալ վարկային կազմակերպություն ՍՊԸ-ի «Ալավերդյան» մասնաճյուղը գրանցելու մասին

34 ՀՀ ԿԲ նախագահի որոշումները 4 գրավատների նկատմամբ տուգանք կիրառելու, 1 գրավատան, 2 արտարժույթի փոխանակման կետերի նախազգուշացում հայտարարելու մասին

34 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 289Ա որոշումը ֆինանսական շուկայում ՀՀ կենտրոնական բանկի գործառնությունների տոկոսադրույքների վերաբերյալ

35 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 261-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2013 թվականի դեկտեմբերի 24-ի թիվ 310-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին»

36 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 262-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի հոկտեմբերի 30-ի թիվ 344-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին»

39 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 264-Ն որոշումը «2018-2019 թվականների հուշադրամների թողարկման ծրագրով նախատեսված «Հովհաննես Զարդարյան-100» արծաթե հուշադրամը շրջանառության մեջ դնելու և դրա նկարագրությունը հաստատելու մասին»

41 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 270-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2016 թվականի դեկտեմբերի 20-ի թիվ 238-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին»

42 ԴՐԱՄԱՎԱՐԿԱՅԻՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔՆԵՐԸ

«Կուտակային կենսաթոշակների մասին»[*] Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին[**]

Հոդված 1. «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության 2010 թվականի դեկտեմբերի 22-ի ՀՕ-244-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) նախաբանը «Հայաստանի Հանրապետությունում» բառերից հետո լրացնել «, ինչպես նաև միջազգային պայմանագրով նախատեսված դեպքերում միջազգային կազմակերպությունում» բառերով:

Հոդված 2. Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասում՝

1) 4-րդ կետի «սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը» բառերը փոխարինել «սահմանվում է Հայաստանի Հանրապետության կառավարության ֆինանսական ոլորտի պետական լիազորված մարմնի, կենսաթոշակային ոլորտի պետական կառավարման լիազոր մարմնի և հարկային մարմնի համատեղ հրամանով» բառերով.

2) 6-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր պարբերությունով.

«Գործատու է համարվում նաև այն միջազգային կազմակերպությունը, որը միջազգային պայմանագրով նախատեսված դեպքերում այդ միջազգային կազմակերպությունում աշխատանքային հարաբերությունների մեջ գտնվող (պաշտոնեական պարտականությունները կատարող) Հայաստանի Հանրապետության քաղաքացու համար Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն կատարում է կենսաթոշակի իրավունք տվող վճարներ.».

3) 23-րդ կետի «Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած» բառերը փոխարինել «Հայաստանի Հանրապետության կառավարության ֆինանսական ոլորտի պետական լիազորված մարմնի և Կենտրոնական բանկի համատեղ հրամանով սահմանված» բառերով.

4) 38-րդ կետը «ինչպես նաև քաղաքացիաիրավական պայմանագրերի համաձայն՝ աշխատանքների կատարման (ծառայությունների մատուցման) դիմաց գործատուից եկամուտ (բացառությամբ ձեռնարկատիրական եկամտի) ստացող անձ» բառերից հետո լրացնել «, միջազգային կազմակերպությունում աշխատանքային հարաբերությունների մեջ գտնվող (պաշտոնեական պարտականությունները կատարող) Հայաստանի Հանրապետության այն քաղաքացին, որի համար միջազգային պայմանագրով նախատեսված դեպքերում միջազգային կազմակերպությունը կատարում է կենսաթոշակի իրավունք տվող վճարներ» բառերով:

Հոդված 3. Օրենքի 5-րդ հոդվածում՝

1) 5-րդ մասի «սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը» բառերը փոխարինել «սահմանում են հարկային մարմինը և Հայաստանի Հանրապետության կառավարության ֆինանսական ոլորտի պետական լիազորված մարմինը՝ համատեղ հրամանով» բառերով.

2) 6-րդ մասի «Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած» բառերը փոխարինել «Հայաստանի Հանրապետության կառավարության ֆինանսական ոլորտի պետական լիազորված մարմնի և հարկային մարմնի համատեղ հրամանով սահմանված» բառերով:

Հոդված 4. Օրենքի 6-րդ հոդվածի 6-րդ մասի «սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը» բառերը փոխարինել «սահմանում են հարկային մարմինը և Հայաստանի Հանրապետության կառավարության ֆինանսական ոլորտի պետական լիազորված մարմինը՝ համատեղ հրամանով» բառերով:

---

[*] *ՀՀՊՏ 2010 N 69 (803)[1], 30.12.10:*

[**] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*

Ընդունված է 2017 թվականի նոյեմբերի 17-ին (ՀՀՊՏ N 74 (1349), 13.12.17):

Հոդված 5. Օրենքի 7-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 11-րդ մասով.

«11. Օտարերկրյա արժույթով կատարված սոցիալական վճարների փոխանցումների գումարները վերահաշվարկվում են Հայաստանի Հանրապետության դրամով՝ ելնելով դրանց՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջե մուտքագրման օրը Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի հրապարակած՝ արժութային շուկաներում ձևավորված միջին փոխարժեքից:»:

Հոդված 6. Օրենքի 9-րդ հոդվածում՝

1) 8-րդ մասի 6-րդ կետի «Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած» բառերը փոխարինել «հարկային մարմնի և Կենտրոնական բանկի համատեղ հրամանով սահմանված» բառերով.

2) 9-րդ մասի առաջին նախադասությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«9. Կուտակային հատկացումները և սույն հոդվածի 7-րդ մասով սահմանված տեղեկատվությունը փոխանցելու հետ կապված սխալները շտկելու, սխալների շտկման գործընթացի տեխնիկածրագրային և ընթացակարգային հարցերը կարգավորելու կարգը սահմանվում է Հայաստանի Հանրապետության կառավարության ֆինանսական ոլորտի պետական լիազորված մարմնի և հարկային մարմնի համատեղ հրամանով՝ համաձայնեցնելով Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի հետ:»:

Հոդված 7. Օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ մասի «Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած» բառերը փոխարինել «Հայաստանի Հանրապետության կառավարության ֆինանսական ոլորտի պետական լիազորված մարմնի և հարկային մարմնի համատեղ հրամանով սահմանված» բառերով:

Հոդված 8. Օրենքի 11-րդ հոդվածի 5-րդ մասի «Հայաստանի Հանրապետության կառավարությունը» բառերը փոխարինել «Հայաստանի Հանրապետության կառավարության ֆինանսական ոլորտի պետական լիազորված մարմինը» բառերով:

Հոդված 9. Օրենքի 12-րդ հոդվածի 7-րդ մասի «սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը» բառերը փոխարինել «սահմանվում է կենսաթոշակային ոլորտի պետական կառավարման լիազոր մարմնի կողմից՝ համաձայնեցնելով Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի հետ» բառերով:

Հոդված 10. Օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ մասի «սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը» բառերը փոխարինել «սահմանում են Հայաստանի Հանրապետության կառավարության ֆինանսական ոլորտի պետական լիազորված մարմինը և Կենտրոնական բանկը՝ համատեղ հրամանով» բառերով:

Հոդված 11. Օրենքի 46-րդ հոդվածի 5-րդ մասի «սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը» բառերը փոխարինել «սահմանում են Հայաստանի Հանրապետության կառավարության ֆինանսական ոլորտի պետական լիազորված մարմինը և Կենտրոնական բանկը՝ համատեղ հրամանով» բառերով:

Հոդված 12. Օրենքի 47-րդ հոդվածում՝

1) 2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2. Հատուցման դեպքի առկայության փաստը բացահայտելուց հետո՝ 2 աշխատանքային օրվա ընթացքում, մասնակիցների ռեեստրը վարողն այդ մասին (ներառյալ՝ սույն օրենքի 45-րդ հոդվածով նախատեսված տարբերության չափի) Հայաստանի Հանրապետության կառավարության ֆինանսական ոլորտի պետական լիազորված մարմնի և Կենտրոնական բանկի համատեղ հրամանով սահմանված կարգով տեղեկացնում է Հայաստանի Հանրապետության կառավարության ֆինանսական ոլորտի պետական լիազորված մարմնին և երաշխիքային ֆոնդին:».

2) 7-րդ մասի «սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը» բառերը փոխարինել «սահմանվում են Հայաստանի Հանրապետության կառավարու-

թյան ֆինանսական ոլորտի պետական լիազորված մարմնի և Կենտրոնական բանկի համատեղ հրամանով» բառերով:

Հոդված 13. Օրենքի 54-րդ հոդվածի 2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2. Ծրագրային վճարների հաշվարկման մեթոդաբանությունը և վճարման կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարության ֆինանսական ոլորտի պետական լիազորված մարմինը՝ համաձայնեցնելով Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի հետ»:

Հոդված 14. Օրենքի 56-րդ հոդվածի 4-րդ մասի «Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած» բառերը փոխարինել «կենսաթոշակային ոլորտի պետական կառավարման լիազոր մարմնի և Հայաստանի Հանրապետության կառավարության ֆինանսական ոլորտի պետական լիազորված մարմնի համատեղ հրամանով սահմանված» բառերով:

Հոդված 15. Օրենքի 71-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 5-րդ մասով.

«5. Սույն հոդվածի դրույթները չեն տարածվում միջազգային կազմակերպություն հանդիսացող գործատուի հետ աշխատանքային հարաբերությունների մեջ գտնվող (պաշտոնեական պարտականությունները կատարող) վարձու աշխատողների համար այդ միջազգային կազմակերպության կողմից սոցիալական վճարներ կատարելու հարաբերությունների վրա, եթե Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով այլ բան նախատեսված չէ:»:

Հոդված 16. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Հայաստանի Հանրապետության Նախագահ Ս. Սարգսյան
7 դեկտեմբերի 2017 թ., Երևան, ՀՕ-216-Ն

«Հաշվապահական հաշվառման մասին»[*] Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին[**]

Հոդված 1. «Հաշվապահական հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության 2002 թվականի դեկտեմբերի 26-ի ՀՕ-515-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 5.1-ին հոդվածում «Շահութահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին» բառերը փոխարինել «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքին» բառերով:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2018 թվականի հունվարի 1-ից:

Օրենքի 5.1-ին հոդվածով սահմանված՝ հաշվապահական հաշվառման ոլորտը կարգավորող օրենսդրության պահանջներին համապատասխան՝ հաշվապահական հաշվառում վարելու հնարավորություն ընձեռող համակարգչային ծրագրերով վարելու ժամանակացույցի կիրառման իմաստով 2018 թվականի համար հիմք է ընդունվում «Շահութահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան հաշվարկված՝ 2017 թվականի համախառն եկամտի չափը:

Հայաստանի Հանրապետության Նախագահ Ս. Սարգսյան
29 դեկտեմբերի 2017 թ., Երևան, ՀՕ-277-Ն

---

[*] *ՀՀՊՏ 2003 N 9 (244), 12. 02.03:*
[**] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է 2017 թվականի դեկտեմբերի 21-ին (ՀՀՊՏ N 83 (1358), 29.12.17):

«Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին»[*] Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին[**]

Հոդված 1. «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության 1996 թվականի հունիսի 30-ի ՀՕ-69 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 55-րդ հոդվածում՝

1) «ապրանքների ներմուծման համար մաքսային սահմանին վճարման ենթակա հարկերի, մաքսատուրքերի և մաքսավճարների վրա» բառերը փոխարինել «Եվրասիական տնտեսական միության անդամ համարվող պետություններից ապրանքների ներմուծման համար հարկային մարմիններին վճարման ենթակա հարկերի, իսկ Եվրասիական տնտեսական միության անդամ չհամարվող պետություններից ապրանքների ներմուծման համար՝ մաքսային մարմիններին վճարման ենթակա հարկերի, մաքսատուրքերի և մաքսավճարների վրա» բառերով.

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասությունով. «Անկախ սույն հոդվածի երկրորդ նախադասության դրույթներից՝ Կենտրոնական բանկը ազատվում է հարկերից, տուրքերից, մաքսատուրքերից և մաքսավճարներից թղթադրամների, մետաղադրամների (այդ թվում՝ հուշադրամների), ինչպես նաև բանկային ոսկու և արժութային արժեքների ներմուծման դեպքում՝ անկախ ներմուծման պահին ներմուծվող թղթադրամը կամ մետաղադրամը (այդ թվում՝ հուշադրամը) Հայաստանի Հանրապետության տարածքում շրջանառության մեջ դրված լինելու հանգամանքից:»:

Հոդված 2. Օրենքի 60-րդ հոդվածից հանել «հրահանգները, ինչպես նաև դրանց վերաբերյալ» բառերը:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2018 թվականի հունվարի 1-ից:

Հայաստանի Հանրապետության Նախագահ Ս. Սարգսյան
29 դեկտեմբերի 2017 թ., Երևան, ՀՕ-282-Ն

---

[*] *ՀՀԱԺՏ 1996 N 12:*
[**] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է 2017 թվականի դեկտեմբերի 21-ին (ՀՀՊՏ N 83 (1358), 29.12.17):

«Լիցենզավորման մասին»[*] Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին[**]

Հոդված 1. «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության 2001 թվականի մայիսի 30-ի ՀՕ-193 օրենքի 46-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր պարբերությունով.

«Պետական տուրքի գումարի չափով վնասի հատուցում չի գանձվում սույն օրենքի 34-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված դեպքերում:»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2018 թվականի հունվարի 1-ից:

Հայաստանի Հանրապետության Նախագահ Ս. Սարգսյան
29 դեկտեմբերի 2017 թ., Երևան, ՀՕ-283-Ն

[*] *ՀՀՊՏ 2001 N 26 (158), 08.08.01:*
[**] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է 2017 թվականի դեկտեմբերի 21-ին (ՀՀՊՏ N 83 (1358), 29.12.17):

«Կուտակային կենսաթոշակների մասին»[*] Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին[**]

Հոդված 1. «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության 2010 թվականի դեկտեմբերի 22-ի ՀՕ-244-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 2-րդ հոդվածի 1-ին մասում՝

1) 1-ին կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1) ***անձնավորված հաշվառում*** ըստ «Եկամտային հարկի, շահութահարկի և սոցիալական վճարի անձնավորված հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի.».

2) 2-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2) ***անհատ ձեռնարկատեր***՝ ըստ «Անհատ ձեռնարկատիրոջ մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի, բացառությամբ «Ինքնազբաղված անձանց հարկային արտոնությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի N 1 հավելվածի ցանկում ընդգրկված գործունեության տեսակներով զբաղվող անհատ ձեռնարկատերերի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքով սահմանված՝ բացառապես ընտանեկան ձեռնարկատիրության սուբյեկտ համարվող անհատ ձեռնարկատերերի.».

3) 7-րդ կետն ուժը կորցրած ճանաչել.

4) 9-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«9) ***ինքնազբաղված անձ*** օրենքով չարգելված որևէ գործունեությունից եկամուտ ստացող (բացառությամբ աշխատավարձի և դրան հավասարեցված եկամտի, ձեռնարկատիրական եկամտի և պայմանագրային եկամտի)՝ վարձու աշխատող, անհատ ձեռնարկատեր և նոտար չհանդիսացող ֆիզիկական անձ (այդ թվում՝ գյուղատնտեսական արտադրանքի իրացումից եկամուտ ստացող գյուղատնտեսական արտադրանք արտադրող, քաղաքացիաիրավական պայմանագրերի հիման վրա եկամուտ ստացող, «Ինքնազբաղված անձանց հարկային արտոնությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի N1 հավելվածի ցանկում ընդգրկված գործունեության տեսակներով զբաղվող), ինչպես նաև «Ինքնազբաղված անձանց հարկային արտոնությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի N1 հավելվածի ցանկում ընդգրկված գործունեության տեսակներով զբաղվող անհատ ձեռնարկատեր և Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքով սահմանված՝ բացառապես ընտանեկան ձեռնարկատիրության սուբյեկտ համարվող անհատ ձեռնարկատեր.».

5) 11-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«11) ***կամուրջ հաշիվ*** ֆինանսական ոլորտում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական մարմնի միասնական գանձապետական հաշվում բացված ենթահաշիվ, որին միասնական հաշվից մուտքագրվում են սոցիալական վճարները՝ մասնակիցների ռեեստրին փոխանցելու համար.».

6) լրացնել հետևյալ բովանդակությամբ 11.1-ին կետով.

«11.1) ***միասնական հաշիվ***՝ ըստ Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի.».

7) 26-րդ, 27-րդ և 37-րդ կետերը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«26) ***հարկային գործակալ***՝ ըստ Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի.

27) ***ձեռնարկատիրական եկամուտ***՝ անհատ ձեռնարկատիրոջ և նոտարի կողմից իրականացվող ձեռնարկատիրական և նոտարական գործունեությունից Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի համաձայն ստացման ենթակա շահութահարկի հարկման բազա (մինչև 2018 թվականը՝ «Եկամտային հարկի մասին» Հայաս-

---

[*] *ՀՀՊՏ 2010 N 69 (803)[1], 30.12.10:*

[**] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*

Ընդունված է 2017 թվականի դեկտեմբերի 21-ին (ՀՀՊՏ N 83 (1358), 29.12.17):

տանի Հանրապետության օրենքի համաձայն ստացման ենթակա տարեկան հարկվող եկամուտ).».

«37) ***սոցիալական վճարի պարտավորություն՝*** մասնակից հանդիսացող վարձու աշխատողի համար սոցիալական վճարներ հաշվարկելու և փոխանցելու պարտավորություն ունեցող հարկային գործակալի կողմից վճարվող սոցիալական վճարի և սույն օրենքի դրույթները խախտելու համար հաշվարկված տույժի գումար: Մասնակից հանդիսացող անհատ ձեռնարկատիրոջ, նոտարի, ինքնազբաղված անձի և հարկային գործակալի պարտականություններից ազատված գործատուի վարձու աշխատողի սոցիալական վճարի գումար.»:

Հոդված 2. Օրենքի 5-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1) աշխատավարձից և Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքով սահմանված՝ շրջանառության հարկի և արտոնագրային հարկի համակարգերում հարկվող գործունեություն իրականացնող անհատ ձեռնարկատերերի և նոտարների համար գործունեության այդ տեսակների մասով՝ համապատասխան դիմումը հարկային մարմին ներկայացնելու կամ մասնակիցների ռեեստրը վարողին ներկայացնելու ամսվան հաջորդող ամսվա 1-ից.»:

Հոդված 3. Օրենքի 6-րդ հոդվածում՝

1) 2-րդ մասի 3-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3) Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքով սահմանված՝ շրջանառության հարկի և արտոնագրային հարկի համակարգերում հարկվող գործունեության տեսակների մասով՝ ամսական 5000 դրամի չափով.»:

2) 3-րդ մասի 2-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2) Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքով սահմանված՝ շրջանառության հարկի և արտոնագրային հարկի համակարգերում հարկվող գործունեության տեսակների մասով՝ ամսական 5000 դրամի չափով.».

3) 4-րդ մասի 4-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«4) Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքով սահմանված՝ շրջանառության հարկի և արտոնագրային հարկի համակարգերում հարկվող գործունեության տեսակների մասով՝ դիմումը ներկայացնելու (դիմումի հիման վրա սույն օրենքով սահմանված կարգով կենսաթոշակային հաշիվը բացելու), սույն օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված անձի կենսաթոշակային տարիքը լրանալու օրվան հաջորդող ամսվանից:».

4) 5-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«5. Սույն հոդվածի 2-րդ մասի 3-րդ և 3-րդ մասի 2-րդ կետերով սահմանված սոցիալական վճարը համարվում է Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքով սահմանված՝ շրջանառության հարկի և արտոնագրային հարկի համակարգերում հարկվող գործունեության տեսակների մասով հաշվարկված սոցիալական վճարի գծով վերջնական պարտավորություն:».

5) 7-րդ մասի 2-րդ կետի «բ» ենթակետի «25000» թիվը փոխարինել «300000» թվով:

Հոդված 4. Օրենքի 7-րդ հոդվածում՝

1) 2-րդ և 3-րդ մասերի «Եկամտային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով» բառերը փոխարինել «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքով» բառերով.

2) 4-րդ մասի «Եկամտային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով» բառերը փոխարինել «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքով» բառերով.

3) 5-րդ մասի առաջին պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Նոտարները, անհատ ձեռնարկատերերը և ինքնազբաղված անձինք Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքով սահմանված ժամկետում էլեկտրոնային եղանակով հարկային մարմին են ներկայացնում տարեկան անձնավորված հաշվարկ:».

4) 6-րդ մասը «Եկամտային հարկի» բառերից հետո լրացնել «,շահութահարկի» բառով.

5) 7-րդ և 8-րդ մասերը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«7. Գործատուները և սույն հոդվածի 5-րդ մասի երկրորդ պարբերությունում նշված վարձու աշխատողները սոցիալական վճարի ճշտված հաշվարկները ներկայացնում են Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքով սահմանված կարգով: Ճշտված հաշվարկների հիման վրա կատարվում է սոցիալական վճարների պարտավորությունների վերահաշվարկ, բացառությամբ հաշվարկված տույժերի:

8. Նոտարները, անհատ ձեռնարկատերերը և ինքնազբաղվածները հաշվետու ժամանակահատվածի համար տարեկան սոցիալական վճարի մասին ճշտված հաշվարկները ներկայացնում են Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքով սահմանված կարգով: Ճշտված հաշվարկների հիման վրա կատարվում է սոցիալական վճարների վերահաշվարկ:»:

Հոդված 5. Օրենքի 8-րդ հոդվածում՝

1) 2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2. Սոցիալական վճարի պարտավորությունները հաշվառվում են հաշվարկի ներկայացման օրով և մարվում են Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքով սահմանված կարգով:

Սոցիալական վճարի (բացառությամբ ճշտված հաշվարկ ներկայացնելու արդյունքում առաջացածի) պարտավորությունը տվյալ հաշվետու ժամանակահատվածի համար համարվում է մարված՝ միասնական հաշվից այդ հաշվետու ժամանակահատվածի սոցիալական վճարի և տույժի գումարները մարվելու դեպքում:

Սույն մասի կիրառման իմաստով սոցիալական վճարի ճշտված հաշվարկները ներկայացնելու արդյունքում առաջացած լրացուցիչ պարտավորությունները և նվազեցումները հաշվառվում են ճշտված հաշվարկը ներկայացնելու օրով:».

2) 3-րդ մասն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 6. Օրենքի 9-րդ հոդվածում՝

1) 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Հարկային մարմինը սոցիալական վճարների վերաբերյալ հաշվարկները փաստացի ստանալու օրվանից հետո՝ առավելագույնը 10-օրյա ժամկետում, մշակում է դրանք և վճարման հանձնարարական է ուղարկում գանձապետարան՝ սոցիալական վճար կատարած (կատարող) անձի համար (օգտին) Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից կուտակային հատկացում կատարելու (համապատասխան գումարները մասնակիցների ռեեստրը վարողին փոխանցելու) համար, եթե ներկայացված տեղեկություններում չկան սխալներ, և փոխանցվել են սոցիալական վճարների հաշվետվության մեջ նշված սոցիալական վճարների գծով պարտավորությունները: Կուտակային հատկացման գումարը ձևավորվում է սոցիալական վճարներից և սույն օրենքի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից հատկացվող լրացուցիչ միջոցներից:».

2) 2-րդ մասի 3-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3) Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքով սահմանված՝ շրջանառության հարկի և արտոնագրային հարկի համակարգերում հարկվող գործունեության տեսակների մասով՝ ամսական 10000 դրամի չափով.».

3) 5-րդ մասի 1-ին կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1) Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքով սահմանված՝ շրջանառության հարկի և արտոնագրային հարկի համակարգերում հարկվող գործունեության տեսակների մասով՝ ամսական 5000 դրամի չափով.»:

Հոդված 7. Օրենքի 14-րդ հոդվածում՝

1) 1-ին մասի 3-րդ կետի «Եկամտային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով եկամտային հարկի համար» բառերը փոխարինել «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքով շահութահարկի և եկամտային հարկի համար» բառերով.

2) 1-ին մասի 7-րդ կետի «Նրանք պարտավոր են շտկել սխալները և ներկայացնել ճշգրտված հաշվարկ սույն օրենքի 9-րդ հոդվածի 9-րդ մասով նախատեսված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ սահմանված կարգով» բառերը փոխարինել «Նրանք կարող են շտկել սխալները և ներկայացնել ճշգրտված հաշվարկ սույն օրենքով սահմանված կարգով» բառերով:

Հոդված 8. Օրենքի 65-րդ հոդվածի 1-ին մասը «Եկամտային հարկի» բառերից հետո լրացնել «, շահութահարկի» բառով:

Հոդված 9. Օրենքի 71-րդ հոդվածում՝

1) 1-ին մասի «0.15» թիվը փոխարինել «0.075» թվով, իսկ «365« թիվը՝ «730» թվով.

2) 4-րդ մասի երկրորդ պարբերության «Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30.2-րդ հոդվածով» բառերը փոխարինել «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքով» բառերով:

Հոդված 10. Օրենքի 81-րդ հոդվածում 1-ին մասի 1-ին կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1) աշխատավարձից և Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքով սահմանված՝ շրջանառության հարկի և արտոնագրային հարկի համակարգերում հարկվող գործունեություն իրականացնող անհատ ձեռնարկատերերի և նոտարների համար գործունեության այդ տեսակների մասով՝ համապատասխան դիմումը հարկային մարմին ներկայացնելու ամսվան հաջորդող ամսվա 1-ից.»:

Հոդված 11. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2018 թվականի հունվարի 1-ից և տարածվում է 2018 թվականի հունվարի 1-ից հետո ծագած հարաբերությունների վրա: Սույն օրենքն ուժի մեջ մտնելու օրվանից ուժը կորցրած ճանաչել «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության 2015 թվականի նոյեմբերի 24-ի ՀՕ-166-Ն օրենքը:

Սույն օրենքն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար Օրենքի 71-րդ հոդվածով սահմանված տույժը գործատուն (հարկային գործակալը) վճարում է 0.075 տոկոսի չափով, այդ թվում՝ նաև այն դեպքում, երբ տույժերի հաշվարկն սկսվել է մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը: Մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելն սկսված և սույն օրենքն ուժի մեջ մտնելու օրվա դրությամբ դեռևս չավարտված տույժերի հաշվարկը սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո շարունակվում է մինչև հաշվարկի 365-րդ օրը լրանալը:

Հայաստանի Հանրապետության Նախագահ Ս. Սարգսյան
29 դեկտեմբերի 2017 թ., Երևան, ՀՕ-291-Ն

«Սնանկության մասին»[*] Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին[**]

Հոդված 1. «Սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության 2006 թվականի դեկտեմբերի 25-ի ՀՕ-51-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի «գ» ենթակետում «կամ պարտադիր այլ վճարներ» բառերը փոխարինել «, այլ վճարներ» բառերով:

Հոդված 2. Օրենքի 6-րդ հոդվածում՝

1) 1-ին մասի «այլ պարտադիր վճարումների» և «պարտադիր այլ վճարումների» բառերը փոխարինել «այլ վճարների» բառերով.

2) 2-րդ մասի վերջին պարբերության վերջին նախադասությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Պահանջի (պահանջների) չափի մեջ հաշվարկվում են նաև կատարողական վարույթի իրականացման հետ կապված ծախսերը և գույքի իրացումից ծագող ավելացված արժեքի հարկի, ակցիզային հարկի, շրջանառության հարկի, բնապահպանական հարկի պարտավորությունները (սույն օրենքի իմաստով՝ գույքի իրացումից ծագող հարկային պարտավորություններ):»:

Հոդված 3. Օրենքի 11-րդ հոդվածի 3-րդ մասի «բ» կետից հանել «պետական» բառը, իսկ «ֆինանսական հաշվետվությունները» բառերը փոխարինել «հարկային հաշվարկները» բառերով:

Հոդված 4. Օրենքի 15.5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետից հանել «պարտադիր» բառը:

Հոդված 5. Օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասում «հարկերի և պարտադիր վճարների գերավճարների առկայությունը պարզելուն ուղղված» բառերը փոխարինել «միասնական հաշվին մուտքագրման ենթակա գումարների հիմնավորվածության և հանդիպակաց» բառերով:

Հոդված 6. Օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասում «իրացումից ստացված անուղղակի հարկերի» բառերը փոխարինել «գույքի իրացումից ծագող հարկային պարտավորությունների» բառերով:

Հոդված 7. Օրենքի 39-րդ հոդվածում՝

1) 2-րդ մասից հանել «և պարտադիր» բառերը.

2) 5-րդ մասի «ա» կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«ա) սնանկության վարույթի ընթացքում հարկերի և (կամ) վճարների գծով լրացուցիչ առաջացած պարտավորությունների վերաբերյալ հարկային մարմնի սահմանած ձևով տեղեկատվության, այդ թվում՝ ապահովված պարտատիրոջ կողմից ներկայացված տեղեկատվությունը (որի հիման վրա հաշվարկվում են պարտապանի հարկային պարտավորությունները), և դրանք գրանցում է պարտատերերի գրանցամատյանում՝ համապատասխան հերթում.»:

Հոդված 8. Օրենքի 44-րդ հոդվածում «գույքի վաճառքի հետ կապված անուղղակի հարկային պարտավորությունները» բառերը փոխարինել «գույքի իրացումից ծագող հարկային պարտավորությունները» բառերով:

---

[*] *ՀՀՊՏ 2007 N 7 (531), 31.01.07:*

[**] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*

Ընդունված է 2017 թվականի դեկտեմբերի 21-ին (ՀՀՊՏ N 83 (1358), 29.12.17):

Հոդված 9. Օրենքի 76-րդ հոդվածի 6-րդ մասում «կվճարեն իրացումից ծագող անուղղակի հարկերը» բառերը փոխարինել «կկատարեն գույքի իրացումից ծագող հարկային պարտավորությունները» բառերով:

Հոդված 10. Օրենքի 82-րդ հոդվածում՝

1) 1-ին մասի «ե» կետի «օտարման հետ կապված ընթացիկ անուղղակի հարկային պարտավորությունները» բառերը փոխարինել «գույքի իրացումից ծագող հարկային պարտավորությունները» բառերով.

2) «է» կետի «հարկային, պարտադիր այլ վճարների» բառերը փոխարինել «հարկերի և (կամ) վճարների» բառերով:

Հոդված 11. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2018 թվականի հունվարի 1-ից:

Հայաստանի Հանրապետության Նախագահ Ս. Սարգսյան
29 դեկտեմբերի 2017 թ., Երևան, ՀՕ-298-Ն

«Բաժնետիրական ընկերությունների մասին»[*] Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին[**]

Հոդված 1. «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության 2001 թվականի սեպտեմբերի 25-ի ՀՕ-232 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 2-րդ հոդվածի 5-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«5. Ընկերությունն իրավունք ունի օրենքով սահմանված կարգով բացելու հաշիվներ Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա պետությունների բանկերում, իսկ 50 տոկոսից ավելի պետական կամ համայնքի կամ պետական ու համայնքի բաժնեմասեր (հանրագումարով) ունեցող Ընկերությունը, ինչպես նաև 50 տոկոսից ավելի պետական կամ համայնքի բաժնեմաս կամ պետական ու համայնքի (հանրագումարով) բաժնեմասեր ունեցող Ընկերության հիմնադրած Ընկերությունը կարող է բացել հաշիվներ նաև պետական ֆինանսների կառավարման բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից լիազորված պետական կառավարման մարմնի գանձապետարանում (այսուհետ՝ գանձապետարան):»:

Հոդված 2. Օրենքի 88-րդ հոդվածի 3-րդ մասի «զ» կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«զ) բանկերում բացում է Ընկերության հաշվարկային (այդ թվում՝ արտարժութային) և այլ հաշիվներ (ընդ որում, 50 տոկոսից ավելի պետական կամ համայնքի կամ պետական ու համայնքի (հանրագումարով) բաժնեմասեր ունեցող Ընկերության դեպքում կամ այն դեպքում, երբ Ընկերության հիմնադիրը 50 տոկոսից ավելի պետական կամ համայնքի բաժնեմաս կամ պետական ու համայնքի (հանրագումարով) բաժնեմասեր ունեցող Ընկերությունն է, ապա կարող է հաշիվներ բացել նաև գանձապետարանում).»:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Հայաստանի Հանրապետության Նախագահ Ս. Սարգսյան
29 դեկտեմբերի 2017 թ., Երևան, ՀՕ-308-Ն

---

[*] *ՀՀՊՏ 2001 N 34 (166), 06.11.01:*
[**] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է 2017 թվականի դեկտեմբերի 14-ին (ՀՀՊՏ N 83 (1358), 29.12.17):

«Հրապարակային սակարկությունների մասին»[*] Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին[**]

Հոդված 1. «Հրապարակային սակարկությունների մասին» Հայաստանի Հանրապետության 2003 թվականի հոկտեմբերի 8-ի ՀՕ-15-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 8-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ 12-րդ կետով.

«12) հարկային գործակալ հանդիսանալու դեպքում աճուրդում հաղթած մասնակցի կողմից լոտի գինը վճարելու կարգը:»:

Հոդված 2. Օրենքի 35-րդ հոդվածի 2-րդ մասի առաջին պարբերությունը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասություններով. «Հաջորդ աճուրդներում լոտի մեկնարկային գինը չի իջեցվում տասներորդ հարկադիր աճուրդը չկայանալու դեպքում, եթե պարտապանն ունի այլ գույք, իսկ եթե պարտապանն այլ գույք չունի, ապա հաջորդ աճուրդներում լոտի մեկնարկային գինը չի իջեցվում քսաներորդ հարկադիր աճուրդը չկայանալու դեպքում: Տասներորդ հարկադիր աճուրդը չկայանալու դեպքում հարկադիր աճուրդի է ներկայացվում նաև պարտապանին պատկանող այլ գույք:»:

Հոդված 3. Օրենքի 35.1-ին հոդվածում՝

1) 3-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3. Հարկադիր էլեկտրոնային աճուրդի մասին հրապարակային ծանուցումը կայքում հրապարակվում է հարկադիր էլեկտրոնային աճուրդ անցկացնելու վերաբերյալ հարկադիր կատարողի որոշման մասին պարտապանին և պահանջատիրոջը պատշաճ ծանուցելուց հետո՝ տասնօրյա ժամկետում՝ աշխատանքային ժամերին, որը պետք է պարունակի սույն օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 1-9-րդ և 12-րդ կետերով սահմանված տեղեկությունները:».

2) 4-րդ մասն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 4. Օրենքի 35.2-րդ հոդվածի 6-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«6. Աճուրդում հաղթած մասնակիցը պարտավոր է աճուրդն անցկացնելու օրվանից երեք բանկային օրվա ընթացքում ծառայության դեպոզիտ հաշվին կամ դրամարկղ մուծել լոտի գնման գինը՝ հաշվանցելով նախավճարը: Աճուրդում հաղթած մասնակիցը լոտի գնման գինը մուծելու դեպքում հաշվանցում է նաև նախօրոք որպես հարկային գործակալ վճարած եկամտային հարկը՝ ծառայություն ներկայացնելով վճարման փաստը հավաստող փաստաթուղթ: Հաղթողի կողմից գնման գինը չմուծվելու դեպքում նախավճարը չի վերադարձվում և մնում է հարկադիր կատարման ծառայության դեպոզիտ հաշվում: Ծառայությունը ֆիզիկական անձանց պատկանած գույքը հարկադիր էլեկտրոնային աճուրդով հարկային գործակալներին օտարելու վերաբերյալ տեղեկատվություն է տրամադրում Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեին, որի կարգը սահմանվում է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի հրամանով:»:

Հոդված 5. Օրենքի 35.3-րդ հոդվածում՝

1) 1-ին մասի 3-րդ կետը «գնման գինը» բառերից հետո լրացնել «կամ չի ներկայացրել եկամտային հարկի վճարումը հավաստող փաստաթուղթ» բառերով.

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ 3-րդ և 4-րդ մասերով.

«3. Հարկադիր էլեկտրոնային աճուրդի արդյունքում կնքված առք ու վաճառքի պայմանագիրն անվավեր ճանաչվելու դեպքում հարկադիր էլեկտրոնային աճուրդի

[*] *ՀՀՊՏ 2003 N 56 (291), 12.11.03:*
[**] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է 2017 թվականի դեկտեմբերի 13-ին (ՀՀՊՏ N 83 (1358), 29.12.17):

արդյունքում գնած գույքի նկատմամբ դատարանի վճռի հիման վրա վերականգնվում են պարտապանի սեփականության իրավունքը, իրացման հետևանքով գույքի նկատմամբ դադարած այլ իրավունքները և արգելանքները, իսկ պահանջատերը, հարկադիր կատարողը և պարտապանը լոտի վաճառքից ստացված գումարներն իրենց ստացած չափով վերադարձնում են գնորդին:

4. Հարկադիր էլեկտրոնային աճուրդի արդյունքում կնքված առք ու վաճառքի պայմանագիրն անվավեր ճանաչվելու դեպքում հարկադիր կատարողը տասնօրյա ժամկետում իրականացնում է օրենքով նախատեսված լոտի գնահատմանն ուղղված գործողություններ, բացառությամբ այն դեպքերի, երբ պահանջատերերի պահանջները բավարարվել են, կամ պարտապանն ունի իրացման գործընթացում գտնվող այլ գույք:»:

Հոդված 6. Օրենքի 35.4-րդ հոդվածում՝

1) 2-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասություններով. «Հաջորդ աճուրդներում լոտի մեկնարկային գինը չի իջեցվում տասներորդ հարկադիր աճուրդը չկայանալու դեպքում, եթե պարտապանն ունի այլ գույք, իսկ եթե պարտապանն այլ գույք չունի, ապա հաջորդ աճուրդներում լոտի մեկնարկային գինը չի իջեցվում քսաներորդ հարկադիր աճուրդը չկայանալու դեպքում: Տասներորդ հարկադիր աճուրդը չկայանալու դեպքում հարկադիր աճուրդի է ներկայացվում նաև պարտապանին պատկանող այլ գույք:».

2) 6-րդ մասի երկրորդ պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Գույքը (լոտը) պահանջատիրոջը հանձնվում է պահանջատիրոջ կողմից կատարողական գործողությունների կատարման ծախսերը վճարելուց հետո, իսկ գույքի (լոտի) հանձնման կապակցությամբ հարկեր վճարելու պարտականություն առաջացնելու դեպքում՝ նաև դրա կատարումը հավաստող փաստաթուղթը ներկայացնելուց հետո:»:

Հոդված 7. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Հայաստանի Հանրապետության Նախագահ Ս. Սարգսյան
29 դեկտեմբերի 2017 թ., Երևան, ՀՕ-310-Ն

«Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին**

Հոդված 1. «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության 1996 թվականի հունիսի 30-ի ՀՕ-69 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 1-ին հոդվածում՝

1) 1-ին մասն առաջին նախադասությունից առաջ լրացնել նոր նախադասությունով. «Հայաստանի Հանրապետության ազգային բանկը Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկն է:».

2) 5-րդ մասի «իր խնդիրներն» բառերը փոխարինել «Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և օրենքով իրեն վերապահված նպատակներն ու գործառույթները» բառերով:

Հոդված 2. Օրենքի ամբողջ տեքստում «խնդիրներն» բառը փոխարինել «նպատակներն» բառով՝ համապատասխան հոլովաձևերով, իսկ 14-րդ հոդվածի 2-րդ մասում՝ «նպատակներն ու գործառնություններն» բառերով:

Հոդված 3. Օրենքի 2-րդ հոդվածում՝

1) վերնագիրը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«***Հոդված 2. Կենտրոնական բանկի գործառույթները»***.

2) 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Կենտրոնական բանկն իր նպատակներն իրագործելիս իրականացնում է օրենքով իրեն վերապահված գործառույթները:».

3) ամբողջ հոդվածը «նորմատիվ» բառից առաջ լրացնել «ենթաօրենսդրական» բառով.

4) 3-րդ մասի երկրորդ պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Կենտրոնական բանկի խորհուրդն ընդունում է ենթաօրենսդրական նորմատիվ, անհատական որոշումներ, իսկ Կենտրոնական բանկի՝ որպես բանկ հանդես գալու դեպքում՝ ներքին իրավական ակտեր՝ որոշումներ:

Կենտրոնական բանկի նախագահն ընդունում է անհատական, իսկ Կենտրոնական բանկի՝ որպես բանկ հանդես գալու դեպքում՝ ներքին իրավական ակտեր՝ որոշումներ ու կարգադրություններ:»:

Հոդված 4. Օրենքը լրացնել հետևյալ բովանդակությամբ 3.1-ին հոդվածով.

«***Հոդված 3.1. Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերը***

1. Կենտրոնական բանկը ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտեր ընդունում է միայն օրենքով լիազորված լինելու դեպքում և օրենքով սահմանված շրջանակներում՝ պահպանելով օրինականության և որոշակիության սկզբունքները: Այդ ակտերն ընդունվում ու հրապարակվում են օրենքով սահմանված կարգով:

2. Կենտրոնական բանկը ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտեր կարող է ընդունել հետևյալ դեպքերում՝

ա) ֆինանսական կազմակերպությունների տնտեսական նորմատիվների սահմանմանը և հաշվարկմանը վերաբերող նորմատիվ իրավական ակտեր.

բ) արժութային կարգավորման վերաբերյալ նորմատիվ իրավական ակտեր.

գ) սպառողների շահերի պաշտպանության ոլորտի նորմատիվ իրավական ակտեր.

դ) փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմատիվ իրավական ակտեր.

---

* *ՀՀԱժՏ 1996 N 12:*

** *Ոչ պաշտոնական հրատարակություն:*

Ընդունված է 2017 թվականի դեկտեմբերի 13-ին (ՀՀՊՏ N 83 (1358), 29.12.17):

ե) ֆինանսական կազմակերպությունների լիցենզավորման, գրանցման, վերակազմավորման, լուծարման, սնանկության, անվճարունակության, գործունեության դադարեցման վերաբերյալ նորմատիվ իրավական ակտեր.

զ) ֆինանսական կազմակերպությունների մասնակիցների ու ղեկավարների նկատմամբ պահանջներ սահմանող նորմատիվ իրավական ակտեր.

է) ֆինանսական կազմակերպությունների կամ դրանց մասնակիցների կողմից կնքվող գործարքների նկատմամբ պահանջներ սահմանող նորմատիվ իրավական ակտեր.

ը) արժեթղթերի շուկան և ներդրումային ծառայությունները կարգավորող նորմատիվ իրավական ակտեր.

թ) ֆինանսական համակարգում տեղեկությունների, անձնական տվյալների մշակման վերաբերյալ նորմատիվ իրավական ակտեր.

ժ) կուտակային կենսաթոշակային համակարգի և ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության կարգավորմանն ուղղված նորմատիվ իրավական ակտեր.

ժա) ֆինանսական կազմակերպությունների վերահսկողության վերաբերյալ նորմատիվ իրավական ակտեր.

ժբ) ավանդների երաշխավորման համակարգը կարգավորող նորմատիվ իրավական ակտեր.

ժգ) վճարահաշվարկային համակարգերի կարգավորմանն ուղղված նորմատիվ իրավական ակտեր.

ժդ) օրենքով նախատեսված դեպքերում՝ ֆինանսական համակարգին վերաբերող պետական այլ մարմինների հետ կնքվող համատեղ նորմատիվ իրավական ակտեր.

ժե) ֆինանսական համակարգում տնտեսական մրցակցության պաշտպանության վերաբերյալ նորմատիվ իրավական ակտեր.

ժզ) օրենքով նախատեսված այլ ոլորտներում ու դեպքերում:»:

Հոդված 5. Օրենքի 4-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«***Հոդված 4. Կենտրոնական բանկի հիմնական նպատակներն ու գործառույթները***

1. Կենտրոնական բանկի հիմնական նպատակներն են Հայաստանի Հանրապետությունում գների կայունության և ֆինանսական կայունության ապահովումը:

2. Գների կայունության ապահովման նպատակով Կենտրոնական բանկի գործառույթն է գների կայունության ապահովմանն ուղղված միջոցների ձեռնարկումը: Գների կայունության նպատակն իրագործելու համար Կենտրոնական բանկը մշակում, հաստատում և իրականացնում է դրամավարկային քաղաքականության ծրագրերը:

3. Եթե Կենտրոնական բանկի մյուս նպատակները հակասում են իր հիմնական նպատակներին, ապա Կենտրոնական բանկն առաջնություն է տալիս հիմնական նպատակներին և ղեկավարվում է դրանց իրագործման անհրաժեշտությամբ:»:

Հոդված 6. Օրենքի 5-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«***Հոդված 5. Կենտրոնական բանկի այլ նպատակներն ու գործառույթները***

1. Կենտրոնական բանկի այլ նպատակներն են՝

ա) Հայաստանի Հանրապետության ֆինանսական համակարգի կայունության, իրացվելիության, վճարունակության և բնականոն գործունեության համար անհրաժեշտ պայմաններ ապահովելը.

բ) դրամավարկային, ֆինանսական համակարգի, վճարային հաշվեկշռի, միջազգային ներդրումային դիրքի և արտաքին պարտքի վիճակագրության հավաքագրումը, ամփոփումը և հրապարակումը.

գ) գործուն վճարահաշվարկային համակարգերի ստեղծումն ու զարգացումը.

դ) Հայաստանի Հանրապետության արժույթի թողարկումը, դրամաշրջանառության կազմակերպումը և կարգավորումը.

ե) փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի կազմակերպումն ու կարգավորումը.

զ) արժեթղթերում ներդրողների պաշտպանության, շուկայում արժեթղթերի արդար գնագոյացման համակարգի ձևավորման ու պահպանման, արժեթղթերի արդար, թա-

փանցիկ և վստահելի շուկայի կանոնակարգված և բնականոն գործունեության և զարգացման համար անհրաժեշտ պայմանների ապահովումը.

է) ֆինանսական համակարգում սպառողների իրավունքների և օրինական շահերի պաշտպանության համար անհրաժեշտ պայմանների ապահովումը.

ը) ֆինանսական համակարգում ազատ և բարեխիղճ տնտեսական մրցակցության ապահովումը:

2. Իր նպատակներն իրագործելու համար Կենտրոնական բանկը՝

ա) իրականացնում է կառավարության բանկային սպասարկումը.

բ) հանդիսանում է կառավարության ֆինանսական գործակալն ու խորհրդատուն.

գ) լիցենզավորում է բանկերը, օրենքով նախատեսված դեպքերում՝ նաև այլ անձանց, կազմակերպությունները ճանաչում է որպես ֆինանսական խումբ, կարգավորում և վերահսկում է դրանց գործունեությունը.

դ) որպես վերջին ատյանի վարկատու՝ վարկեր է տրամադրում բանկերին.

ե) կարգավորում և վերահսկում է վճարահաշվարկային համակարգերը, իրականացնում է վճարահաշվարկային և արժեթղթերի հաշվարկային համակարգերի հսկողություն.

զ) տիրապետում, օգտագործում և տնօրինում է Հայաստանի Հանրապետության միջազգային պահուստները.

է) դրամավարկային, ֆինանսական համակարգի, վճարային հաշվեկշռի, միջազգային ներդրումային դիրքի և արտաքին պարտքի վիճակագրության հավաքագրման, ամփոփման և հրապարակման համար ստանում է անհրաժեշտ տվյալներ, վճարային հաշվեկշռի, միջազգային ներդրումային դիրքի և արտաքին պարտքի վերաբերյալ վիճակագրական անհատական (անվանական) տվյալներ (վիճակագրական գաղտնիք հանդիսացող տվյալներ) պետական ու տեղական ինքնակառավարման մարմիններից, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայությունից: Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայությունից ստացվող անհատական (անվանական) տվյալներն օգտագործվում են բացառապես վիճակագրական նպատակների համար՝ համաձայն Միավորված ազգերի կազմակերպության պաշտոնական վիճակագրության հիմնարար սկզբունքների պահանջների: Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայությունը և Կենտրոնական բանկը համատեղ որոշում են Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության կողմից հավաքագրվող վճարային հաշվեկշռի, միջազգային ներդրումային դիրքի և արտաքին պարտքի վերաբերյալ հավաքագրման ենթակա տվյալների բովանդակությունը և հավաքագրման մեթոդաբանությունը.

ը) իրականացնում է փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման վերաբերյալ տեղեկությունների հավաքագրումը, համակարգումն ու վերլուծությունը, տեղեկությունների փոխանակումը և տրամադրումը ներպետական իրավասու մարմիններին և միջազգային կազմակերպություններին, իսկ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով նախատեսված դեպքերում՝ նաև այլ պետությունների իրավասու մարմիններին.

թ) օրենքով սահմանված կարգով ապահովում է ֆինանսական համակարգում ազատ ու բարեխիղճ տնտեսական մրցակցություն, ընդունում է գերիշխող դիրքի չարաշահումների, հակամրցակցային համաձայնությունների կանխարգելման, համակենտրոնացումների վերաբերյալ ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտեր և տիպաբանություններ.

ժ) իրականացնում է մակրոտնտեսական, ֆինանսական քաղաքականությունների, տնտեսագիտության և կարգավորման դաշտի վերաբերյալ հետազոտություններ:»:

Հոդված 7. Օրենքի 6-րդ հոդվածում՝

1) 1-ին մասի «ամիսների» բառը փոխարինել «եռամսյակների» բառով.

2) 3-րդ մասն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 8. Օրենքը լրացնել հետևյալ բովանդակությամբ 7.1-ին հոդվածով.

«Հոդված 7.1. Կենտրոնական բանկի համագործակցությունը Հայաստանի Հանրապետության տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի հետ

1. Կենտրոնական բանկի կողմից կարգավորվող կամ վերահսկվող անձանց նկատմամբ տնտեսական մրցակցության գործառույթները Հայաստանի Հանրապետության տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով) իրականացնում է Կենտրոնական բանկի հետ համագործակցության սկզբունքի հիման վրա:

2. Կենտրոնական բանկը գերիշխող դիրքի չարաշահումների, հակամրցակցային համաձայնությունների կանխարգելման, համակենտրոնացումների վերաբերյալ ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտեր ընդունելուց առաջ դրանք ներկայացնում է Հանձնաժողով՝ կարծիքի:

3. Կենտրոնական բանկը և Հանձնաժողովը կնքում են համագործակցության հուշագիր, որով կարգավորվում են՝

ա) մրցակցության պաշտպանության խնդիրների հետ կապված համագործակցության ուղղություններն ու ընթացակարգերը.

բ) Հանձնաժողովի ու Կենտրոնական բանկի միջև տեղեկատվության, այդ թվում՝ տնտեսական մրցակցության խնդիրների վերաբերյալ ձեռնարկված միջոցառումների մասին տեղեկատվության փոխանակման դեպքերն ու կարգը.

գ) այն դեպքերը, երբ Հանձնաժողովն ու Կենտրոնական բանկը իրականացնում են իրենց իրավասությունները Կենտրոնական բանկի կողմից կարգավորվող կամ վերահսկվող անձանց նկատմամբ.

դ) ոլորտում մրցակցության պաշտպանության վերաբերյալ սույն հոդվածով նախատեսված, ինչպես նաև օրենքով չարգելված այլ հարցեր:

4. Սույն հոդվածով նախատեսված ոլորտում տնտեսական մրցակցության վերաբերյալ խնդիրների մասին Հանձնաժողովը տեղեկացնում է Կենտրոնական բանկին:

5. Հանձնաժողովը ձեռնպահ է մնում տնտեսական մրցակցության վերաբերյալ բարձրացրած հարցի հետ կապված որևէ միջամտությունից, եթե Կենտրոնական բանկը Հանձնաժողովին հիմնավոր կերպով տեղեկացնում է, որ այդ հարցը, օրենքով սահմանված կարգավորման նպատակներից ելնելով, վերապահվում է Կենտրոնական բանկին, և Կենտրոնական բանկը իրականացնում է օրենքով սահմանված գործառույթներ:

Հանձնաժողովը սույն հոդվածով սահմանված կարգով կարող է արտահայտել դիրքորոշում, իսկ վերջնական որոշումն ընդունում է Կենտրոնական բանկը:

6. Կենտրոնական բանկը ձեռնարկվող միջոցառումների ընթացքում Հանձնաժողովին պետք է օրենքով սահմանված շրջանակներում հնարավորություն ընձեռի ներկայացնելու իր դիրքորոշումը: Կենտրոնական բանկը պարտադիր անդրադառնում է Հանձնաժողովի կողմից բարձրացված բոլոր հարցերին և արտահայտած դիրքորոշումներին՝ նշելով դրանք ընդունելու կամ չընդունելու հիմնավորումները:

Կենտրոնական բանկն իր վերջնական դիրքորոշման կամ որոշման մեջ պետք է հիշատակի Հանձնաժողովի դիրքորոշումը, ինչպես նաև այն չընդունելու դեպքում՝ դրա հիմնավորումները:

Սույն մասով սահմանված կարգով Հանձնաժողովի կողմից դիրքորոշում չներկայացվելու դեպքում Կենտրոնական բանկի որոշումը կամ դիրքորոշումը ընդունվում է առանց Հանձնաժողովի կարծիքի:

7. Սույն հոդվածի 2-րդ, 5-րդ և 6-րդ մասերով սահմանված ընթացակարգը չի կիրառվում այն բացառիկ դեպքերում, երբ Կենտրոնական բանկը նպատակ ունի կանխել ֆինանսական կայունությանն ու գների կայունությանն սպառնացող հնարավոր վտանգը կամ արձագանքել դրան, ֆինանսական կազմակերպությանը ճանաչում է անվճարունակ կամ սնանկ, իրականացնում է ֆինանսական կազմակերպության կամ դրա մասնակցի բաժնեմասի կամ բաժնետոմսի հարկադիր օտարում, իրականացնում է ֆինանսական կազմակերպության վերակազմակերպում, հարկադիր վաճառք կամ լուծարում:

Սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված համագործակցության հուշագրով կարող են սահմանվել նաև այլ բացառիկ դեպքեր:

Կենտրոնական բանկը սույն մասով նախատեսված որոշումներն ընդունելուց հետո այդ մասին տեղեկացնում է Հանձնաժողովին, եթե դրանք չեն պարունակում բանկային կամ օրենքով պահպանվող այլ գաղտնիք պարունակող տեղեկություններ:»:

Հոդված 9. Օրենքի 8-րդ հոդվածի երկրորդ պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Կենտրոնական բանկն իրավունք ունի համագործակցելու այլ պետությունների ֆինանսական վերահսկողության մարմինների հետ: Այդ համագործակցության շրջանակներում Կենտրոնական բանկն իրավունք ունի առանց միջազգային պայմանագրի կամ այլ հուշագրի կնքման այլ պետությունների ֆինանսական վերահսկողության մարմիններից ստանալու ու նրանց տրամադրելու վերահսկողական տեղեկություններ՝ թեկուզև դրանք օրենքով պաշտպանվող գաղտնիք լինեն, պայմանով, որ տվյալ տեղեկությունն անհրաժեշտ լինի տվյալ մարմնին՝ օրենքով իր վրա դրված պարտականությունները կատարելու համար, ինչպես նաև տվյալ մարմինն ունենա վերահսկողական տեղեկությունների պաշտպանման համարժեք ռեժիմ: Առանց միջազգային պայմանագրի կամ այլ հուշագրի կնքման սույն պարբերությունով նախատեսված համագործակցությունն իրականացվում է միայն այն դեպքերում, երբ այլ պետության օրենսդրությամբ թույլատրվում է սույն պարբերությունով նախատեսված տեղեկատվության տրամադրումն առանց միջազգային պայմանագրի կամ այլ հուշագրի կնքման:»:

Հոդված 10. Օրենքի 11.1-ին հոդվածից հանել «վճարային հաշվեկշռի կարգավորման,» բառերը:

Հոդված 11. Օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի երկրորդ պարբերությունից հանել «և ձեռքբերումից» բառերը:

Հոդված 12. Օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ մասում՝

1) «ա» կետի «սղաճը» բառը փոխարինել «գնաճը» բառով.

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ «ա1» կետով.

«ա1) ֆինանսական կայունությունն ապահովելու».

3) «բ» կետից հանել «և հայկական դրամի փոխարժեքը կարգավորելու» բառերը.

4) «գ» կետի «բանկային» բառը փոխարինել «ֆինանսական համակարգի» բառերով:

Հոդված 13. Օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3. Կենտրոնական բանկն Ազգային ժողով է ուղարկում Կենտրոնական բանկի վարչական ծախսերի և կապիտալ ներդրումների վերաբերյալ տեղեկատվություն:»:

Հոդված 14. Օրենքի 16-րդ հոդվածի տեքստը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Կենտրոնական բանկի ֆինանսական հաշվետվությունները յուրաքանչյուր տարի ենթարկվում են արտաքին աուդիտ՝ մասնագիտացված, այդ թվում՝ աուդիտորական ընկերությունների վարկանշմամբ զբաղվող միջազգային ճանաչում ունեցող ինտերնետային կայքերում գրանցված կամ վարկանշված, համընդհանուր միջազգային ճանաչում ունեցող 10 խոշորագույն (բիգ թեն) անկախ աուդիտորական կազմակերպությունների կողմից աուդիտի միջազգային ստանդարտներին համապատասխան: Սույն հոդվածում նշված աուդիտի իրականացումից բացի, այլ անձանց և մարմինների կողմից Կենտրոնական բանկի գործունեության վերաբերյալ աուդիտ (հաշվեքննություն) չի իրականացվում: Արտաքին աուդիտորական կազմակերպությունն ընտրվում է Կենտրոնական բանկի խորհրդի կողմից մինչև երեք տարի ժամկետով:»:

Հոդված 15. Օրենքի 17-րդ հոդվածում՝

1) վերնագիրը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«***Հոդված 17. Կենտրոնական բանկի հաշվետվությունները և գործունեության վերաբերյալ տարեկան հաղորդումը***».

2) 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Կենտրոնական բանկը մինչև յուրաքանչյուր տարվա մայիսի 1-ը հրապարակում է նախորդ ֆինանսական տարվա տարեկան հաշվետվությունը, որը ներառում է՝

ա) ֆինանսական հաշվետվությունները և աուդիտորական եզրակացությունը.

բ) Կենտրոնական բանկի կառավարման վերաբերյալ դրույթները:».

3) 1.1-ին մասն ուժը կորցրած ճանաչել.

4) 2-րդ մասի «հաշվետվություն» բառը փոխարինել «փաստաթուղթ» բառով.

5) 4-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«4. Կենտրոնական բանկը յուրաքանչյուր տարի՝ մինչև մայիսի 1-ը, Ազգային ժողով է ուղարկում և «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքով սահմանված կարգով ու ժամկետում Ազգային ժողովի նիստում ներկայացնում է Կենտրոնական բանկի գործունեության վերաբերյալ տարեկան հաղորդումը, որը բաղկացած է՝

ա) ընթացիկ տարվա առաջին եռամսյակում հաստատված դրամավարկային քաղաքականության ծրագրի հաղորդումից.

բ) նախորդ տարվա դրամավարկային քաղաքականության ծրագրի կատարման հաղորդումից:».

6) 5-րդ մասը «հաշվետվություններում» բառից հետո լրացնել «,հաղորդումներում և փաստաթղթերում» բառերով:

Հոդված 16. Օրենքի 18-րդ հոդվածում՝

1) 2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2. Կենտրոնական բանկի նախագահին Ազգային ժողովի իրավասու մշտական հանձնաժողովի առաջարկությամբ ընտրում է Ազգային ժողովը՝ պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երեք հինգերորդով, վեց տարի ժամկետով:

Կենտրոնական բանկի նախագահի տեղակալներին Ազգային ժողովի իրավասու մշտական հանձնաժողովի առաջարկությամբ ընտրում է Ազգային ժողովը՝ պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ, վեց տարի ժամկետով:

Կենտրոնական բանկի նախագահ և նրա տեղակալներ կարող են ընտրվել բարձրագույն կրթություն ունեցող, 25 տարին լրացած, վերջին չորս տարում միայն Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող, վերջին չորս տարում Հայաստանի Հանրապետությունում մշտապես բնակվող, ընտրական իրավունք ունեցող և հայերենին տիրապետող այն անձինք, որոնք՝

ա) ֆինանսական համակարգում ունեն բարձր հեղինակություն և

բ) դրամավարկային քաղաքականության իրականացման բնագավառում ունեն առնվազն երեք տարվա ղեկավարի կամ միջազգային ֆինանսական կազմակերպություններում երեք տարվա մասնագիտական ստաժ կամ բանկային կամ ապահովագրության կամ արժեթղթերի շուկայի ոլորտում առնվազն չորս տարվա ղեկավարի կամ մակրոտնտեսագիտության բնագավառում ակադեմիական կամ հետազոտական աշխատանքի առնվազն չորս տարվա մասնագիտական ստաժ:».

2) 3-րդ մասն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 17. Օրենքը լրացնել հետևյալ բովանդակությամբ 18.1-ին հոդվածով.

«***Հոդված 18.1. Կենտրոնական բանկի գործադիր կոմիտեն***

1. Կենտրոնական բանկի գործադիր կոմիտեն կազմված է Կենտրոնական բանկի նախագահից, նախագահի տեղակալներից և Կենտրոնական բանկի նախագահի նշանակած Կենտրոնական բանկի ստորաբաժանումների ղեկավարներից:

2. Կենտրոնական բանկի գործադիր կոմիտեն՝

ա) քննարկում և Կենտրոնական բանկի խորհուրդ է ներկայացնում կարծիք Կենտրոնական բանկի խորհրդի կողմից ընդունման ենթակա իրավական ակտերի վերաբերյալ.

բ) Կենտրոնական բանկի նախագահի հանձնարարությամբ քննարկում և նախագահին է ներկայացնում կարծիք Կենտրոնական բանկի նախագահի կողմից ընդունվող իրավական ակտերի վերաբերյալ.

գ) քննարկումներ է կազմակերպում և եզրակացություններ կամ կարծիք է ներկայացնում Կենտրոնական բանկի իրավասությանը վերաբերող ցանկացած հարցի վերաբերյալ.

դ) իրականացնում է Կենտրոնական բանկի նախագահի որոշմամբ այլ գործառույթներ:»:

Հոդված 18. Օրենքի 19-րդ հոդվածում՝

1) 2-րդ մասի՝

ա. առաջին նախադասությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Կենտրոնական բանկի խորհրդի անդամներին Ազգային ժողովի իրավասու մշտական հանձնաժողովի առաջարկությամբ ընտրում է Ազգային ժողովը՝ պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ, վեց տարի ժամկետով:»,

բ. երկրորդ նախադասության մեջ «և հետագայում նշանակված բոլոր անդամները» բառերը փոխարինել «անդամը» բառով,

գ. երկրորդ նախադասությունից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասությունով. «Հետագայում նշանակված խորհրդի անդամների պաշտոնավարման ժամկետը վեց տարի է:».

2) 3-5-րդ մասերը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3. Կենտրոնական բանկի խորհրդի անդամ կարող է ընտրվել բարձրագույն կրթություն ունեցող, 25 տարին լրացած, վերջին չորս տարում միայն Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող, վերջին չորս տարում Հայաստանի Հանրապետությունում մշտապես բնակվող, ընտրական իրավունք ունեցող և հայերենին տիրապետող այն անձինք, որոնք՝

ա) ֆինանսական համակարգում ունեն բարձր հեղինակություն և

բ) դրամավարկային քաղաքականության իրականացման բնագավառում ունեն առնվազն երկու տարվա ղեկավարի կամ միջազգային ֆինանսական կազմակերպություններում երկու տարվա մասնագիտական ստաժ կամ բանկային կամ ապահովագրության կամ արժեթղթերի շուկայի ոլորտում առնվազն չորս տարվա ղեկավարի կամ մակրոտնտեսագիտության բնագավառում ակադեմիական կամ հետազոտական աշխատանքի առնվազն չորս տարվա մասնագիտական ստաժ և

գ) իրենց մասնագիտական կարողություններով և գիտելիքներով ի վիճակի են ապահովել սույն օրենքի 20-րդ հոդվածով սահմանված իրավասությունների կատարումը:

4. Բացի սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված չափանիշներից, խորհուրդը պետք է ձևավորվի այնպես, որ՝

ա) խորհրդի անդամների առնվազն կեսն ունենա մակրոտնտեսագիտության բնագավառում մասնագիտական աշխատանքային փորձ.

բ) խորհրդի անդամներն ունենան բանկային, աուդիտի, ֆինանսական հաշվետվությունների, տեղեկատվական տեխնոլոգիաների, Կենտրոնական բանկի և ֆինանսական կազմակերպությունների գործունեությունը կարգավորող օրենսդրության ոլորտների վերաբերյալ գիտելիքներ:

Կենտրոնական բանկի խորհրդի անդամ, նախագահ կամ տեղակալ չեն կարող լինել այն անձինք, որոնք՝

ա) դատարանի վճռով անգործունակ կամ սահմանափակ գործունակ են ճանաչվել կամ օրինական ուժի մեջ մտած դատավճռով դատապարտվել են դիտավորությամբ կատարված հանցագործության համար.

բ) օրենքով սահմանված կարգով զրկվել են որոշակի պաշտոն վարելու իրավունքից:

5. Կենտրոնական բանկի նախագահը, տեղակալները և խորհրդի այլ անդամներն իրենց լիազորությունների իրականացման ժամանակահատվածում չեն կարող զբաղեցնել իրենց կարգավիճակով չպայմանավորված պաշտոն պետական կամ տեղական ինքնակառավարման այլ մարմիններում, լինել որևէ կուսակցության անդամ կամ որևէ այլ կերպ զբաղվել քաղաքական գործունեությամբ, զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ, կատարել վճարովի այլ աշխատանք, բացի գիտական, կրթական և ստեղծագործական աշխատանքից: Հրապարակային ելույթներում նրանք պետք է ցուցաբերեն քաղաքական զսպվածություն: Կենտրոնական բանկի խորհրդի անդամները, նախագահը, տեղակալներն իրավունք ունեն առևտրային կազմակերպություններում և հիմնադրամներում զբաղեցնելու իրենց կարգավիճակով պայմանավորված պաշտոններ:

Կենտրոնական բանկի խորհրդի անդամները չեն կարող Կենտրոնական բանկում այլ պաշտոններ զբաղեցնել: Կենտրոնական բանկի խորհրդի անդամը պատասխանատու է Կենտրոնական բանկի խորհրդում իր կատարած աշխատանքի համար:»:

Հոդված 19. Օրենքի 20-րդ հոդվածում՝

1) 1-ին մասի «ե» և «զ» կետերը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«ե) ընդունում է Կենտրոնական բանկի ենթաօրենսդրական նորմատիվ, անհատական որոշումներ, իսկ Կենտրոնական բանկի՝ որպես բանկ հանդես գալու դեպքում՝ ներքին իրավական ակտեր՝ որոշումներ.

զ) ֆինանսական համակարգում ազատ տնտեսական մրցակցություն ապահովելու նպատակով ընդունում է գերիշխող դիրքի չարաշահումների, հակամրցակցային համաձայնությունների կանխարգելման, համակենտրոնացումների վերաբերյալ նորմատիվ իրավական ակտեր և տիպաբանություններ.»:

Հոդված 20. Օրենքի 22-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«*Հոդված 22. Կենտրոնական բանկի նախագահին, տեղակալներին, խորհրդի այլ անդամներին պաշտոնից ազատելու հիմքերը*

1. Կենտրոնական բանկի նախագահը, նրա տեղակալները և խորհրդի այլ անդամները կարող են պաշտոնից ազատվել կամովին՝ ազատվելու օրվանից 30 օր առաջ գրավոր տեղեկացնելով Ազգային ժողովին: Տեղեկացնելու օրվան հաջորդող երեսուներորդ օրվանից նրանք համարվում են պաշտոնից ազատված:

2. Կենտրոնական բանկի նախագահի լիազորությունները դադարեցնում է Ազգային ժողովը՝ պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երեք հինգերորդով, իսկ խորհրդի մյուս անդամներինը՝ պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ՝ սույն օրենքի 19-րդ հոդվածի 5-րդ մասի առաջին պարբերությամբ նախատեսված պայմաններից որևէ մեկը խախտելու դեպքում:

3. Կենտրոնական բանկի նախագահի, նրա տեղակալների և խորհրդի այլ անդամների լիազորությունները դադարում են, եթե նրանք՝

ա) դատարանի վճռով անգործունակ կամ սահմանափակ գործունակ են ճանաչվել կամ օրինական ուժի մեջ մտած դատավճռով դատապարտվել են դիտավորությամբ կատարված հանցագործության համար.

բ) օրենքով սահմանված կարգով զրկվել են որոշակի պաշտոն վարելու իրավունքից.

գ) դադարել են Հայաստանի Հանրապետության քաղաքացի լինելուց կամ զրկվել են ընտրական իրավունքից.

դ) մահացել կամ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով ճանաչվել են անհայտ բացակայող:

4. Կենտրոնական բանկի նախագահի, նրա տեղակալների և խորհրդի այլ անդամների լիազորությունները դադարում են նաև, եթե նրանք՝

ա) ժամանակավոր անաշխատունակության հիմքով վեց ամսից ավելի կամ ոչ օրինական հիմքերով երեք ամսից ավելի չեն կատարել իրենց պաշտոնեական պարտականությունները.

բ) մեկ տարվա ընթացքում մեկ քառորդից ավելի անհարգելի բացակայել են խորհրդի նիստերից:

Կենտրոնական բանկի խորհուրդն ընդունում է որոշում սույն մասով նախատեսված հիմքերով փաստերն արձանագրելու մասին, և այդ պահից Կենտրոնական բանկի նախագահի, նրա տեղակալների և խորհրդի այլ անդամների լիազորությունները համարվում են դադարած:»:

Հոդված 21. Օրենքի 23-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«*Հոդված 23. Կենտրոնական բանկի խորհրդի անդամների գույքի և եկամուտների հայտարարագրերը*

1. Կենտրոնական բանկի նախագահը, նախագահի տեղակալները և խորհրդի մյուս անդամներն իրենց գույքի և եկամուտների հայտարարագրեր են ներկայացնում «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն:»:

Հոդված 22. Օրենքի 24-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 5-րդ մասով.

«5. Կենտրոնական բանկը, նրա կառավարման մարմինները, ծառայողները, ինչպես նաև որևէ այլ անձ, որը ներկայացնում է Կենտրոնական բանկը կամ պատշաճ կերպով

լիազորված է գործելու Կենտրոնական բանկի անունից, չեն կարող պատասխանատվության ենթարկվել (այդ թվում՝ հատուցել վնասներ) ֆինանսական կազմակերպությունների վերահսկողության կապակցությամբ կայացված որոշման, կատարված գործողության կամ անգործության համար, եթե գործել են օրենքին համապատասխան (bona fide):»:

Հոդված 23. Օրենքի 25-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«***Հոդված 25. Կենտրոնական բանկի ներքին աուդիտը***

1. Կենտրոնական բանկում ներքին աուդիտի գործառույթն իրականացնում է Կենտրոնական բանկի հատուկ կառուցվածքային ստորաբաժանումը, որն անկախ է Կենտրոնական բանկի գործառույթներից և հաշվետու է Կենտրոնական բանկի խորհրդին:

2. Ներքին աուդիտը Կենտրոնական բանկի խորհրդին, Կենտրոնական բանկի նախագահին և աուդիտի կոմիտեին Կենտրոնական բանկի ներքին հսկողության, ռիսկերի կառավարման և կորպորատիվ կառավարման արդյունավետության վերաբերյալ անկախ և անաչառ գնահատական տվող գործառույթ է:

3. Ներքին աուդիտի ստորաբաժանումը ղեկավարում է գլխավոր աուդիտորը, որին նշանակում և ազատում է Կենտրոնական բանկի խորհուրդը:

4. Ներքին աուդիտի ստորաբաժանումն իր գործունեությունն իրականացնում է սույն օրենքի և Կենտրոնական բանկի խորհրդի հաստատած կանոնադրության համաձայն և առաջնորդվում Ներքին աուդիտորների ինստիտուտի հրապարակած ներքին աուդիտի մասնագիտական գործունեության միջազգային ստանդարտներով և էթիկայի կանոններով:»:

Հոդված 24. Օրենքը լրացնել հետևյալ բովանդակությամբ 25.1-ին հոդվածով.

«***Հոդված 25.1. Կենտրոնական բանկի աուդիտի կոմիտեն***

1. Աուդիտի կոմիտեն գործադիր պարտականություններից և իրավասություններից անկախ մարմին է, որի նպատակն է աջակցել Կենտրոնական բանկի խորհրդին՝ իրականացնելու աուդիտի ոլորտում իր իրավասությունները:

2. Աուդիտի կոմիտեն բաղկացած է Կենտրոնական բանկի խորհրդի երեք անդամից: Կոմիտեի անդամ չեն կարող լինել Կենտրոնական բանկի նախագահը և նրա տեղակալները: Կոմիտեի անդամները չեն վարձատրվում իրենց կատարած աշխատանքի համար: Այդ աշխատանքը նրանք կատարում են որպես Կենտրոնական բանկի խորհրդի անդամ:

3. Աուդիտի կոմիտեն հաշվետու է Կենտրոնական բանկի խորհրդին:

4. Աուդիտի կոմիտեն հսկողություն է իրականացնում ներքին աուդիտի գործառույթի նկատմամբ, դիտարկում է հավաստիացման արտաքին ծառայություններ մատուցողների, այդ թվում՝ արտաքին աուդիտորի աշխատանքների արդյունքները, ինչպես նաև իրականացնում է աուդիտի կոմիտեի կանոնադրությամբ նախատեսված այլ գործառույթներ:

5. Աուդիտի կոմիտեի իրավասությունների իրականացման կարգը սահմանվում է Կենտրոնական բանկի խորհրդի կողմից հաստատվող աուդիտի կոմիտեի կանոնադրությամբ:»:

Հոդված 25. Օրենքի 28-րդ հոդվածում՝

1) 2-րդ մասի «գ» կետի «վերստուգիչ խմբին» բառերը փոխարինել «ներքին աուդիտին» բառերով.

2) 3-րդ մասն «իրականացման» բառից հետո լրացնել «և ֆինանսական կայունության ապահովման» բառերով:

Հոդված 26. Օրենքի 35-րդ հոդվածի 3-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3. Կենտրոնական բանկի սահմանած կարգով և պայմաններով Կենտրոնական բանկում ֆինանսական կայունության ապահովման, վիճակագրության, պատշաճ վերահսկողության իրականացման նպատակով ստեղծվում է բանկերի և վարկային կազմակերպությունների հաճախորդների վարկարժանության տեղեկատվական համա-

կարգ՝ վարկային ռեգիստր, որին պարտադիր մասնակցում են Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բոլոր բանկերը և վարկային կազմակերպությունները:»:

Հոդված 27. Օրենքի 39.1-ին հոդվածի 1-ին մասում՝

1) երկրորդ նախադասության «՝ Կենտրոնական բանկի և սույն մասով սահմանված անձի նկատմամբ բացառիկ վերահսկողության իրավունք ունեցող համապատասխան մարմնի միջև կնքված միջազգային պայմանագրով սահմանված կարգով» բառերը փոխարինել «՝ սույն օրենքի 8-րդ հոդվածով սահմանված կարգով» բառերով.

2) վերջին նախադասությունը հանել:

Հոդված 28. Օրենքի 39.7-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասությունով. «Այդ պատասխանատվության միջոցները Կենտրոնական բանկը կիրառում է՝ ելնելով Կենտրոնական բանկի՝ ֆինանսական համակարգի կարգավորման խնդիրներից ու նպատակներից, և դրանք հանդիսանում են ֆինանսական համակարգի կարգավորիչ միջոցներ:»:

Հոդված 29. Օրենքի 43-րդ հոդվածից հանել «դրամավարկային քաղաքականության տարեկան ծրագրից և» բառերը:

Հոդված 30. Օրենքի 49-րդ հոդվածի 2-րդ մասի «դ» կետը «դրամի» բառից հետո լրացնել «հաշվարկային» բառով:

Հոդված 31. Օրենքի 52-րդ հոդվածի 3-րդ մասում «Նախագահին և Ազգային ժողովին» բառերը փոխարինել «վարչապետին և Ազգային ժողովի նախագահին» բառերով:

Հոդված 32. Անցումային դրույթներ

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում նորընտիր Հանրապետության նախագահի կողմից իր պաշտոնի ստանձնման օրը:

2. Սույն օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասը, 18-րդ հոդվածի 1-ին մասը և 18-րդ հոդվածով խմբագրվող՝ Օրենքի 19-րդ հոդվածի 3-րդ մասը չեն տարածվում Կենտրոնական բանկի գործող նախագահի, տեղակալների և խորհրդի անդամների վրա: Նրանց վրա տարածվում են մինչև սույն օրենքի փոփոխությունները գործող դրույթները:

3. Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ վեց ամսվա ընթացքում, Հանձնաժողովն ու Կենտրոնական բանկը կնքում են սույն օրենքի 8-րդ հոդվածով նախատեսված համագործակցության հուշագիրը՝ կնքելուց առաջ կարծիքի ներկայացնելով Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն:

Հայաստանի Հանրապետության Նախագահ Ս. Սարգսյան
29 դեկտեմբերի 2017 թ., Երևան, ՀՕ-313-Ն

«Բաժնետիրական ընկերությունների մասին»[*] Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում և փոփոխություններ կատարելու մասին[**]

Հոդված 1. «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության 2001 թվականի սեպտեմբերի 25-ի ՀՕ-232 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 63-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետը «ներկայացուցիչ՝» բառից հետո լրացնել «բացահայտելով փոխկապակցվածությանն առնչվող հանգամանքները՝» բառերով:

Հոդված 2. Օրենքի 83-րդ հոդվածի 3-րդ մասի «է» կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«է) տեղեկություններ այլ իրավաբանական անձի մասին, որում նշված անձն զբաղեցնում է ղեկավար (խորհրդի նախագահ կամ անդամ, տնօրեն, գլխավոր տնօրեն կամ վարչության, տնօրինության անդամ և այլն) կամ այլ պաշտոն, այդ պաշտոնում նրա իրավունքներն ու պարտականությունները, եթե տեղեկությունների տրամադրումով չեն խախտվում «Անձնական տվյալների պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջները, ինչպես նաև տեղեկություններ «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված հիմքերով այդ իրավաբանական անձի հետ փոխկապակցվածության մասին.»:

Հոդված 3. Օրենքի 86-րդ հոդվածի 1-ին մասի երրորդ պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Բաց բաժնետիրական ընկերություններում խորհրդի նախագահի և տնօրենի (գլխավոր տնօրենի) պաշտոնները չեն կարող համատեղվել:»:

Հոդված 4. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Հայաստանի Հանրապետության Նախագահ Ս. Սարգսյան
29 դեկտեմբերի 2017 թ., Երևան, ՀՕ-318-Ն

---

[*] *ՀՀՊՏ 2001 N 34 (166), 06.11.01:*
[**] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է 2017 թվականի դեկտեմբերի 14-ին (ՀՀՊՏ N 83 (1358), 29.12.17):

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում[*] լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին[**]

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 1998 թվականի մայիսի 5-ի քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 249-րդ հոդվածի 2-րդ կետի երրորդ պարբերությունը առաջին նախադասությունից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասություններով. «Գրավառուն կարող է իրացնել գրավի առարկան մինչև սույն պարբերությամբ նախատեսված երկու ամիսը լրանալը, եթե պարտապանը և գրավատուն (եթե գրավատուն և պարտապանը տարբեր սուբյեկտներ են) բռնագանձման ծանուցումն ստանալուց հետո սույն օրենսգրքի 20.1-ին գլխով սահմանված կարգով գրավոր համաձայնություն են տվել գրավի առարկայի բռնագանձման վերաբերյալ: Մինչև բռնագանձման ծանուցում ստանալը գրավի առարկայի բռնագանձման վերաբերյալ տրված համաձայնությունն առ ոչինչ է:»:

Հոդված 2. Օրենսգրքի 251-րդ հոդվածում՝

1) 1-ին կետի «տրվում է գրավատուին» բառերը փոխարինել «սույն օրենսգրքի 243.1-ին հոդվածի 3-րդ կետով սահմանված կարգով տասնօրյա ժամկետում փոխանցվում է գրավատուին, եթե գրավի պայմանագրով այդ գումարի փոխանցման այլ կարգ նախատեսված չէ» բառերով.

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ 7-9-րդ կետերով.

«7. Քաղաքացուն պատկանող գրավ դրված գույքը գրավառու բանկին (վարկային կազմակերպությանը) կամ նրա նշած անձին ի սեփականություն անցնելուց հետո՝ մեկշաբաթյա ժամկետում, գրավառուն պատշաճ ձևով ծանուցում է գրավատուին և պարտապանին, եթե գրավատուն պարտապան չէ, ապա գրավի առարկայի ի սեփականություն ընդունելու օրվա և գնի, գրավով ապահովված պարտավորության մարման չափի, իսկ պարտավորությունը լրիվ չմարվելու դեպքում՝ պարտքի մնացորդի մասին:

8. Գրավի առարկայի իրացումից հետո՝ մեկշաբաթյա ժամկետում, գրավառուն պատշաճ ձևով ծանուցում է գրավատուին և պարտապանին, եթե գրավատուն պարտապան չէ, գրավի առարկայի իրացման օրվա և գնի, գրավով ապահովված պարտավորության մարման չափի, ինչպես նաև առկայության դեպքում՝ գրավատուին վերադարձման ենթակա գումարի չափի, իսկ պարտավորությունը լրիվ մարված չլինելու դեպքում՝ պարտքի մնացորդի մասին:

9. Սույն հոդվածի 7-րդ և 8-րդ կետերով սահմանված պահանջների խախտման դեպքում պարտքի մնացորդի նկատմամբ տուժանք և սույն օրենսգրքի 411-րդ հոդվածով նախատեսված տոկոսներ չեն հաշվարկվում մինչև խախտման վերացումը:»:

Հոդված 3. Օրենսգրքի 372-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հոդված 372. Տուժանքի առավելագույն չափը և այն պակասեցնելը

1. Պայմանագրով որոշված տուժանքի տարեկան առավելագույն չափը չի կարող գերազանցել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի սահմանած բանկային տոկոսի հաշվարկային դրույքի քառապատիկը, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով: Պայմանագրով որոշված բոլոր տուժանքների հանրագումարի չափը չի կարող գերազանցել տվյալ պահին առկա պարտքի հիմնական գումարը:

2. Սույն հոդվածի 1-ին կետով սահմանված պայմանը խախտող համաձայնությունն առ ոչինչ է:

3. Դատարանը կամ ֆինանսական համակարգի հաշտարարը պարտապանի պահանջով պակասեցնում է վճարման ենթակա կամ վճարված պայմանագրով որոշված

[*] *ՀՀՊՏ 1998 N 17 (50), 10.08.98:*
[**] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է 2017 թվականի դեկտեմբերի 14-ին (ՀՀՊՏ N 83 (1358), 29.12.17):

տուժանքի չափը, եթե տուժանքն ակնհայտորեն անհամաչափ է պարտավորության խախտման հետևանքներին, և՝

1) պարտապանը, «Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն, հանդիսանում է շահառու, կամ

2) մահացած պարտապանի՝ ժառանգությունն ընդունած ժառանգները ներառված են սոցիալապես անապահով ընտանիքների ցանկում, կամ

3) պարտավորության պատշաճ կատարումն անհնար է եղել անհաղթահարելի ուժի հետևանքով, և օրենքով կամ պայմանագրով անհաղթահարելի ուժը չի ազատում պատասխանատվությունից:

4. Դատարանի կամ ֆինանսական համակարգի հաշտարարի կողմից տուժանքը պակասեցնելու դեպքում պարտատերը պարտապանի դիմումի հիման վրա դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելու կամ ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումը պարտադիր դառնալու պահից կատարում է վերահաշվարկ, իսկ տուժանքը վճարված լինելու դեպքում պարտապանին վերադարձնում է վճարված տուժանքի պակասեցված չափին համապատասխան գումար:»:

Հոդված 4. Օրենսգիրքը լրացնել հետևյալ բովանդակությամբ 372.1-ին հոդվածով.

«***Հոդված 372.1. Տուժանքի վճարման պարտավորության դադարումը***

1. Պարտավորության խախտման օրվանից եռամսյա ժամկետում գրավառուի կողմից սահմանված կարգով պարտքի բռնագանձման, այդ թվում՝ արտադատական կարգով, գործընթացը չսկսելու դեպքում եռամսյա ժամկետին հաջորդող ժամանակահատվածի համար տուժանք չի հաշվարկվում մինչև պարտքի բռնագանձման գործընթացն սկսելու օրը:

2. Գրավառուի կողմից առանց դատարան դիմելու գրավի առարկայի բռնագանձման ծանուցումը հանձնելու օրվանից սույն օրենսգրքի 249-րդ հոդվածի 2-րդ կետի երրորդ պարբերությամբ նախատեսված երկամսյա ժամկետը լրանալուց, իսկ այդ ժամկետում պարտապանի և գրավատուի կողմից (եթե գրավատուն և պարտապանը տարբեր սուբյեկտներ են) գրավի առարկայի բռնագանձման վերաբերյալ գրավոր համաձայնություն տալու դեպքում համաձայնությունը սույն օրենսգրքի 20.1-ին գլխով սահմանված կարգով գրավառուին հանձնելուց հետո՝ երկամսյա ժամկետում, գրավի առարկան գրավառուին կամ գրավառուի նշած անձին ի սեփականություն չանցնելու, ուղղակի վաճառքով չիրացվելու, իսկ հրապարակային սակարկությունների միջոցով իրացնելիս, առաջին աճուրդը չանցկացվելու դեպքում երկամսյա ժամկետին հաջորդող ժամանակահատվածի համար տուժանք չի հաշվարկվում մինչև գրավի առարկան գրավառուին կամ գրավառուի նշած անձին ի սեփականություն անցնելը, ուղղակի վաճառքով իրացվելը կամ առաջին աճուրդն անցկացվելը:

3. Գրավառուի և գրավատուի, ինչպես նաև պարտապանի միջև, եթե գրավատուն պարտապանը չէ, պարտավորության խախտումից հետո կարող է կնքվել սույն հոդվածի 1-ին և 2-րդ կետերով սահմանված ժամկետում բռնագանձման կամ գրավի առարկայի իրացման գործընթացն սկսելու ժամկետը երկարաձգելու մասին համաձայնություն: Այն դեպքում, երբ պարտավորությանը մասնակցում է մի քանի պարտապան, կամ պարտավորությունն ապահովված է նաև այլ գրավի առարկայով, երկարաձգված ժամանակահատվածի համար հաշվարկվող տուժանքների համար անձը պատասխանատվություն չի կրում, եթե չի տվել բռնագանձման կամ գրավի առարկայի իրացման գործընթացն սկսելու ժամկետը երկարաձգելու մասին համաձայնություն:

4. Բռնագանձման կամ գրավի առարկայի իրացման գործընթացն սկսելու ժամկետը երկարաձգելու մասին համաձայնությունը կնքվում է հասարակ գրավոր ձևով:

5. Սույն հոդվածի 1-ին և 2-րդ կետերով սահմանված, ինչպես նաև գրավի առարկայի իրացման գործընթացն սկսելու ժամկետը երկարաձգելու մասին համաձայնությամբ նախատեսված ժամկետների ընթացքը կասեցվում է գրավի առարկայի վրա դրա իրացմանը խոչընդոտող արգելանք դրվելու կամ այլ սահմանափակում կիրառվելու, դատական ակտով գրավառուին սույն հոդվածի 1-ին և 2-րդ կետերով նախատեսված

գործողությունների կատարումն արգելվելու կամ արտադատական կարգով գրավի առարկայի իրացմանը խոչընդոտող այլ հանգամանքների առկայության դեպքում՝ մինչև այդ խոչընդոտների վերացումը: Խոչընդոտների տևողության ժամանակահատվածում տուժանքը շարունակում է հաշվարկվել:

6. Սույն հոդվածի 1-3-րդ կետերով նախատեսված պայմանների խախտմամբ կնքված տուժանքի վճարման վերաբերյալ համաձայնությունն առ ոչինչ է:»:

Հոդված 5. Օրենսգրքի 411-րդ հոդվածը 1-ին կետի երկրորդ պարբերության առաջին նախադասությունից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասությունով. «Պայմանագրով նախատեսված տոկոսի չափը չի կարող գերազանցել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի սահմանած՝ բանկային տոկոսի հաշվարկային դրույքի կրկնապատիկը:»:

Հոդված 6. Անցումային և եզրափակիչ դրույթներ

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

2. Սույն օրենքի 3-րդ և 5-րդ հոդվածների գործողությունը տարածվում է սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո կնքված պայմանագրերի վրա:

3. Սույն օրենքի 1-ին և 4-րդ հոդվածների գործողությունը տարածվում է սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո պարտապանի կողմից պարտատիրոջ հանդեպ ունեցած պարտավորության առաջին խախտումից հետո ծագած իրավահարաբերությունների վրա:

Հայաստանի Հանրապետության Նախագահ Ս. Սարգսյան
29 դեկտեմբերի 2017 թ., Երևան, ՀՕ-319-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ
ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

ԿԲ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ԵՎ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՎ

- ***Ուժը կորցրած է ճանաչվել*** «ՄԻԿՐՈ ԿԱՊԻՏԱԼ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության գրավատնային գործունեության իրականացման լիցենզիան (որոշում թիվ 271Ա):
- ***Արտարժույթի առուվաճառքի լիցենզիա է տրամադրվել*** «ՈՍԿԵ ԱԳԱ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը (որոշում թիվ 276Ա):
- ***Դադարեցվել է*** «Մոբիդրամ» փակ բաժնետիրական ընկերություն վճարահաշվարկային կազմակերպության «Վեդի» մասնաճյուղը (որոշում թիվ 279Ա):
- ***Ուժը կորցրած է ճանաչվել*** «ԱՐՍԿԱՐԵ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության գրավատնային գործունեության իրականացման լիցենզիան (որոշում թիվ 281Ա):
- ***Ուժը կորցրած է ճանաչվել*** «ԱՄՈՒՆԻ ԿՐԵԴԻՏ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության գրավատնային գործունեության իրականացման լիցենզիան (որոշում թիվ 282Ա):
- ***Փոխանակման կետի մասնաճյուղի լիցենզիա է տրամադրվել*** «ՈՍԿԵ ԱԳԱ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը (որոշում թիվ 283Ա):
- ***Ուժը կորցրած է ճանաչվել*** «Ջայնթ Թրեյդ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը տրված արտարժույթի առուվաճառքի իրականացման լիցենզիան (որոշում թիվ 286Ա):
- ***Գրանցվել է*** «ԲԼԵՍՍ» ունիվերսալ վարկային կազմակերպություն սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության «Ալավերդյան» մասնաճյուղը (որոշում թիվ 1/955Ա):
- Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջները խախտելու համար 4 գրավատների նկատմամբ ***կիրառվել է տուգանք***՝ 340000 դրամ գումարի չափով (որոշումներ թիվ 1/956Ա, 1/957Ա, 1/978Ա, 1/1017Ա), 1 գրավատան, 2 արտարժույթի փոխանակման կետերի ***հայտարարվել է նախազգուշացում***՝ հետագայում նման խախտումները բացառելու հանձնարարականով (որոշումներ թիվ 1/957Ա, 1/982Ա, 1/983Ա):

ՅԻ ՆԱՆՍԱԿԱՆ ՇՈՒԿԱՅՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «գ» ենթակետով՝ ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 2017 թ. դեկտեմբերի 26-ի թիվ 289Ա որոշմամբ ***ՀՀ կենտրոնական բանկի վերաֆինանսավորման տոկոսադրույքը սահմանվել է 6. 0%, ՀՀ կենտրոնական բանկի կողմից տրամադրվող լոմբարդային ռեպոների տոկոսադրույքը՝ 7.5%, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից բանկերից ներգրավվող միջոցների տոկոսադրույքը՝ 4.5%:***

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2013 թվականի դեկտեմբերի 24-ի թիվ 310-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին[*]

Հիմք ընդունելով «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածի 3-րդ մասը,

ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետով և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածով և 70-րդ հոդվածի 1-ին մասով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2013 թվականի դեկտեմբերի 24-ի «Պարտադիր կենսաթոշակային ֆոնդի ընտրություն չկատարած մասնակիցների՝ ֆոնդերի կառավարիչների միջև բաշխման կարգը սահմանելու մասին» թիվ 310-Ն որոշման 2-րդ կետում «2017» թիվը փոխարինել «2018» թվով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
30 նոյեմբերի 2017 թ., N 261-Ն

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2017 թ. նոյեմբերի 24-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 19.12.2017 թ. (ՀՀԳՏ N34 (603), 25.12.2017):

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի հոկտեմբերի 30-ի թիվ 344-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին[*]

Նպատակ ունենալով հստակեցնել ապահովագրական գործակալների հաշվառման գործընթացը,

հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետը, «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 87-րդ հոդվածի 3-րդ մասը, 90-րդ հոդվածի 4-րդ մասը, 103-րդ հոդվածը,

ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածով և 70-րդ հոդվածի 1-ին մասով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի հոկտեմբերի 30-ի ««Ապահովագրության ոլորտում լիցենզավորման, գրանցման, համաձայնության, թույլտվության տրամադրման, մասնագիտական համապատասխանության ստուգման և որակավորման կարգը» կանոնակարգ 3/01-ը հաստատելու մասին» թիվ 344-Ն որոշմամբ հաստատված «Ապահովագրության ոլորտում լիցենզավորման, գրանցման, համաձայնության, թույլտվության տրամադրման, մասնագիտական համապատասխանության ստուգման և որակավորման կարգը» կանոնակարգ 3/01-ում (այսուհետ՝ Կանոնակարգ) կատարել հետևյալ փոփոխությունները.
   1) Կանոնակարգի 225-րդ կետից «1 միլիոն դրամ՝» բառերից հետո հանել «ֆիզիկական անձ կամ» բառերը,
   2) Կանոնակարգի 245-րդ կետից հանել «ֆիզիկական» բառը,
   3) Կանոնակարգի Հավելված 12-ը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն որոշման Հավելվածի (կցվում է),
   4) Կանոնակարգի Հավելված 32-ում.
      ա. «ֆիզիկական անձ (այդ թվում՝ անհատ ձեռնարկատեր հանդիսացող) ապահովագրական գործակալի լուսանկարը» բառերը փոխարինել «անհատ ձեռնարկատեր հանդիսացող ապահովագրական գործակալի լուսանկարը» բառերով,
      բ. «ֆիզիկական անձի համար՝» բառերը փոխարինել «անհատ ձեռնարկատիրոջ համար՝» բառերով,
   5) Կանոնակարգի Հավելված 37-ի վերնագրում «ֆիզիկական անձանց թեկնածուների» բառերը փոխարինել «անձանց» բառով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

3. «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և սույն կանոնակարգով անհատ ձեռնարկատեր ապահովագրական գործակալների նկատմամբ սահմանված պահանջները տարածվում են մինչև սույն որոշումն ուժի մտնելը հաշվառված ֆիզիկական անձ ապահովագրական գործակալների վրա:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
30 նոյեմբերի 2017 թ., N 262-Ն

---

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2017 թ. նոյեմբերի 24-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 19.12.2017 թ. (ՀՀԳՏ N34 (603), 25.12.2017):

Հավելված
Հաստատված է
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2017 թվականի նոյեմբերի 24-ի թիվ 262-Ն որոշմամբ

«Հավելված 12
«Ապահովագրության ոլորտում լիցենզավորման, գրանցման,
համաձայնության, թույլտվության տրամադրման,
մասնագիտական համապատասխանության ստուգման
և որակավորման կարգը» կանոնակարգ 3/01-ի

ՏԵՂԵԿԱՆՔ
Ապահովագրական գործակալների վերաբերյալ

Ամրակցեք այստեղ անհատ ձեռնարկատեր գործակալի լուսանկարը:
☐ Այս վանդակում նշում է կատարվում, եթե ներկայացվում են միայն փոփոխությունները:
1. Ապահովագրական գործակալների ռեգիստրում անձին հաշվառելու համար միջնորդագիր ներկայացնող ապահովագրական ընկերության անվանումը
2. Ապահովագրական գործակալի անվանումը, կազմակերպական-իրավական ձևը կամ անուն, հայրանուն, ազգանունը Իրավաբանական անձ գործակալի համար՝ Անվանումը՝ Կազմակերպաիրավական ձևը՝ Անհատ ձեռնարկատեր գործակալի համար՝ անուն, ազգանուն, հայրանունը
3. Ապահովագրական գործակալի վերաբերյալ տվյալներ
3.1. Իրավաբանական անձ գործակալի համար՝ Հարկ վճարողի հաշվառման համարը՝ Պետական գրանցման համարը՝ Անհատ ձեռնարկատեր գործակալի համար՝ Հարկ վճարողի հաշվառման համարը՝ Հանրային ծառայությունների համարանիշը՝ կամ Հանրային ծառայությունների համարանիշ չստանալու վերաբերյալ տեղեկանքի համարը՝
3.2. Իրավաբանական անձ գործակալի համար՝ Գործունեության տեսակը՝ _____ Այլ գործունեությամբ չի զբաղվում Գործունեության իրականացման վայրը՝ Հեռախոսահամար՝ Անհատ ձեռնարկատեր գործակալի համար՝ Գործունեության տեսակը՝ _____ Այլ գործունեությամբ չի զբաղվում Հաշվառման վայրը՝ Գործունեության իրականացման վայրը՝ Հեռախոսահամար՝
3.3. Իրավաբանական անձ գործակալի ղեկավար անձանց ցանկը
3.4. Իրավաբանական անձի ապահովագրական գործակալի գործառույթներ իրականացնող ֆիզիկական անձ աշխատակիցների ցանկը

3.5. Իրավաբանական անձ գործակալի մասնաճյուղերի և (կամ) ներկայացուցչությունների ցանկը: *Սույն կետը լրացվում է, եթե իրավաբանական անձ գործակալը մտադիր է իրականացնել ապահովագրական գործակալի գործառնություններ մասնաճյուղերի և ներկայացուցչությունների միջոցով: Վերջիններիս բացակայության դեպքում կատարվում է «չունի մասնաճյուղեր և (կամ) ներկայացուցչություններ» նշումը:*
4. Արդյո՞ք ապահովագրական ընկերությունը (որի հետ աշխատելու է գործակալը) ստանձնել է ապահովագրական գործակալի մասնագիտական անփութության հետևանքով պատճառված վնասի հատուցումն ապահովելու պատասխանատվությունը: Ոչ, Այո, նշել պատասխանատվության չափը:
5. Արդյո՞ք ապահովագրական ընկերությունը հավաստում է, որ ապահովագրական գործակալի գործառույթներ իրականացնող անձինք տիրապետում են սույն կանոնակարգի հավելված 37-ով սահմանված թեմաներին՝ ըստ սահմանված խորության: Ոչ, Այո:
5.1. Արդյո՞ք ապահովագրական ընկերությունը հավաստում է, որ Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պարտադիր ապահովագրության գծով ապահովագրական գործակալի գործառույթներ իրականացնող անձինք ունեն Ավտոապահովագրության միասնական պատուհան համակարգով աշխատելու հմտություն: Ոչ, Այո:
6. Արդյո՞ք առկա է «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 90-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ կետերով սահմանված հիմքերի բացակայության մասին հայտարարությունը: Ոչ, Այո:
7. Կից ներկայացնում ենք ապահովագրական գործակալի հետ կնքած պայմանագրի պատճենը (..էջ): *Ապահովագրական ընկերության կողմից ապահովագրական գործակալի մասնագիտական անփութության հետևանքով պատճառված վնասի հատուցումն ապահովելու պատասխանատվությունը չստանձնելու դեպքում* կից ներկայացնում ենք մասնագիտական անփութության հետևանքով պատճառված վնասի հատուցումն ապահովելու համար գործակալի կնքած պատասխանատվության ապահովագրության պայմանագրի պատճենը:

»:

2018-2019 թվականների հուշադրամների թողարկման ծրագրով նախատեսված «Հովհաննես Զարդարյան-100» արծաթե հուշադրամը շրջանառության մեջ դնելու և դրա նկարագրությունը հաստատելու մասին[*]

Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «է» կետը և 40-րդ հոդվածը՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. 2018 թվականի հունվարի 8-ից շրջանառության մեջ դնել «Հովհաննես Զարդարյան-100» արծաթե հուշադրամը:

2. Հաստատել սույն որոշման 1-ին կետով սահմանված հուշադրամի նկարագրությունը, որը էսքիզների հետ միասին ներկայացված է սույն որոշման Հավելվածում (կցվում է):

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
30 նոյեմբերի 2017 թ., N 264-Ն

Հավելված
Հաստատված է
Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի խորհրդի
2017 թվականի նոյեմբերի 24-ի թիվ 264-Ն որոշմամբ

ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

«Հովհաննես Զարդարյան-100» արծաթե հուշադրամի

Հուշադրամի դիմերեսին պատկերված է Հ. Զարդարյանի «Գարուն» կտավը: Ձախից վերին և ստորին հատվածներում ՀՀ զինանշանն է և անվանական արժեքի մակագրությունը՝ «100 ԴՐԱՄ»: Վերին աջ կողմում թողարկման տարեթիվն է՝ «2018»: Վերին և ստորին եզրագծերով «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ» մակագրությունն է:

Հուշադրամի դարձերեսին պատկերված են Հ. Զարդարյանի դիմանկարը, Հ. Զարդարյանի «Ձգտում» կտավից դրվագ և երեք վրձինները: Մակագրություններն են՝ «ՀՈՎՀԱՆՆԵՍ ԶԱՐԴԱՐՅԱՆ», «HOVHANNES ZARDARYAN» և «1918-1992»:

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2017 թ. նոյեմբերի 24-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 19.12.2017 թ. (ՀՀԳՏ N34 (603), 25.12.2017):


Տեխնիկական չափանիշները

Անվանական արժեքը	100 դրամ
Մետաղը/հարգը	արծաթ 925^0
Չափը	28,0 x 40,0 մմ
Քաշը	28,28 գ
Որակը	լավացված
Դրամաշուրթը	հարթ
Քանակը	500 հատ

էսքիզների հեղինակն է Վարդան Վարդանյանը:
Հատվել է Լիտվայի դրամահատարանում:

«Հովհաննես Զարդարյան-100» արծաթե հուշադրամի դիմերեսի և դարձերեսի էսքիզները





*Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2016 թվականի դեկտեմբերի 20-ի թիվ 238-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին**

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՀՀ ֆինանսական համակարգում առկա են վարկատու կազմակերպություններ, որոնք մեկ հաճախորդին տրամադրել են կամ կարճաժամկետ հեռանկարում հնարավոր է տրամադրել 999-ից ավելի կրեդիտներ,

ելնելով այն հանգամանքից, որ ներկայում սահմանված վարկային կոդի կառուցվածքը հնարավորություն չի ընձեռում մեկ հաճախորդին 1000 և ավելի կրեդիտների տրամադրման դեպքում համապատասխան վարկային կոդի տրամադրման համար,

հիմք ընդունելով «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 41-րդ հոդվածը, 43-րդ հոդվածի 1.1 մասը, «Վճարահաշվարկային համակարգերի և վճարահաշվարկային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 17-րդ հոդվածի 2-րդ մասը, «Վարկային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի 3-րդ մասը, ինչպես նաև

ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետով, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածով և 70-րդ հոդվածի 1-ին մասով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2016 թվականի դեկտեմբերի 20-ի ***«Վարկային գործառնության և կրեդիտի դիմաց վճարման հատուկ կարգ սահմանելու, ինչպես նաև վարկային կոդերի կառուցվածքը սահմանելու մասին»*** թիվ 238-Ն որոշմամբ հաստատված ***«Վարկային գործառնության և կրեդիտի դիմաց վճարման հատուկ կարգը, ինչպես նաև վարկային կոդերի կառուցվածքը»*** հավելվածի Գլուխ 5-ը 27-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ 28-րդ կետով.

«28. Այն դեպքում, երբ համապատասխան կազմակերպության կողմից մեկ հաճախորդին տրամադրված կրեդիտների քանակը գերազանցում է 999-ը, ապա սույն կարգի 22-րդ կետի 4-րդ ենթակետով սահմանված «L» նիշը սույն կետով սահմանված պարտադիր հաջորդականությամբ նշագրվում է համապատասխանաբար հետևյալ լատինատառ նիշերով՝ «M», «N», «O», «P», «Q», «R», «S», «T», «U», «V», «W», «X», «Y», «Z»:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
12 դեկտեմբերի 2017 թ., N 270-Ն

---

* *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2017 թ. դեկտեմբերի 8-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 18.12.2017 թ. (ՀՀՊՏ N34 (603), 25.12.2017):

ԴՐԱՄԱՎԱՐԿԱՅԻՆ
ԱՄՓՈՓԱԳԻՐ

(ԴԵԿՏԵՄԲԵՐ 2017)

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի «ՀՀ ԿԲ տեղեկագիր» ամենամսյա պարբերականի «Դրամավարկային ամփոփագիր» բաժինը ներառում է դրամավարկային, արտաքին, հարկաբյուջետային և իրական հատվածների, ՀՀ վճարահաշվարկային և ֆինանսական համակարգերի ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվություն:

Իրական հատվածի (բացառությամբ բնականոն գնաճի) և արտաքին հատվածում ընդգրկված ապրանքների արտահանման ու ներմուծման վերաբերյալ տեղեկատվության աղբյուրը ՀՀ ազգային վիճակագրական ծառայությունն է (http://www.armstat.am), իսկ հարկաբյուջետային, արտաքին հատվածի, դրամավարկային և ֆինանսական վիճակագրության, բնականոն գնաճի և ՀՀ վճարահաշվարկային համակարգի վերաբերյալ տեղեկատվության աղբյուրը՝ ՀՀ կենտրոնական բանկը: Դրամավարկային և ֆինանսական վիճակագրությունում ընդգրկված է դրամավարկային ցուցանիշների, ֆինանսական շուկայի և ֆինանսական համակարգի հիմնական ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվություն:

Վճարային հաշվեկշիռը, միջազգային ներդրումային դիրքը և արտաքին պարտքը կազմվում և հրապարակվում են եռամսյակային կտրվածքով՝ փետրվար, մայիս, օգոստոս և նոյեմբեր ամիսների տեղեկագրերում:

Դրամավարկային ցուցանիշները կազմված են համաձայն ՀՀ ԿԲ «ՀՀ դրամավարկային և ֆինանսական վիճակագրության ձեռնարկի», որը տեղադրված է ՀՀ ԿԲ «Տնային էջի» «Վիճակագրություն» բաժնում:

Դրամավարկային ցուցանիշների, միջազգային պահուստների և արտաքին պարտավորությունների վերաբերյալ տեղեկատվությունը ենթակա է վերանայման եռամսյակային և տարեկան կտրվածքով՝ նշված ցուցանիշներում ԿԲ եզրափակիչ շրջանառության գործառնություններն ընդգրկելու նպատակով: Եռամսյակային տվյալները վերանայվում են (համարվում են վերջնական) հաշվետու եռամսյակի ավարտից երկու ամիս հետո, իսկ տարեկան տվյալները՝ հաշվետու տարվա ավարտից երեք ամիս հետո:

Ըստ ապահովագրական դասերի ապահովագրավճարների, ապահովագրական հատուցումների, գործող պայմանագրերի քանակների և գործող պայմանագրերով ապահովագրական գումարների վերաբերյալ տեղեկատվությունը հրապարակվում է տարեկան կտրվածքով՝ դեկտեմբեր ամսվա տեղեկագրում:

Վիճակագրական տվյալների հրապարակման ժամանակացույցը տեղադրված է ՀՀ ԿԲ «Տնային էջի» «Վիճակագրություն» բաժնում:

Հարցերի և առաջարկությունների համար դիմել
Վիճակագրության վարչություն
Հեռախոս՝ (374 10) 592-562
Ֆաքս՝ (374 10) 592-564
էլ. փոստ՝ statistics@cba.am

«Դրամավարկային ամփոփագիրը», ինչպես նաև ՀՀ ԿԲ այլ հրապարակումները տեղադրվում են ՀՀ կենտրոնական բանկի «Տնային էջում», որի հասցեն է՝
http://www.cba.am

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Իրական հատվածի ցուցանիշներ 46

Մակրոտնտեսական ցուցանիշներ

Գների փոփոխություն

Գնաճ

Հիմնական ապրանքախմբերի նպաստումը գնաճին

Բնականոն գնաճ

Բնականոն գնաճին ամենամեծ նպաստում ունեցող ապրանքատեսակները

Արտաքին հատվածի ցուցանիշներ 49

Ապրանքների արտահանում և ներմուծում

Ըստ երկրների ՀՀ բանկային համակարգի միջոցով ֆիզիկական անձանց փոխանցումները

Իրական և անվանական արդյունավետ փոխարժեք

Հայաստանի Հանրապետության միջազգային պահուստների կառուցվածքը

ՀՀ կենտրոնական բանկի արտաքին պարտավորությունների կառուցվածքը

Պետական բյուջեի ցուցանիշներ 54

Կենտրոնական բանկի և Գանձապետարանի փոխհարաբերությունները

Դրամավարկային ցուցանիշներ 55

Փողի ագրեգատներ և փողի բազմարկիչներ

Սեզոնայնորեն հարթեցված փողի ագրեգատներ

ՀՀ կենտրոնական բանկի ամփոփ ցուցանիշներ

ՀՀ առևտրային բանկերի ամփոփ ցուցանիշներ

ՀՀ վարկային կազմակերպությունների ամփոփ ցուցանիշներ

ՀՀ ավանդային կազմակերպությունների ամփոփ ցուցանիշներ

ՀՀ ավանդային կազմակերպությունների զուտ արտաքին ակտիվներ

Դոլարայնացման մակարդակը Հայաստանի Հանրապետությունում

Ֆինանսական շուկա 65

Տոկոսադրույքներ

Բանկային տոկոսի հաշվարկային դրույքը

ՀՀ ԿԲ կողմից սահմանված դրամավարկային քաղաքականության գործիքների տոկոսադրույքներ

Ֆինանսական շուկայում ՀՀ ԿԲ գործառնությունների ծավալը

Ռեպո շուկայի շրջանառությունը

Առևտրային բանկերի կողմից տնտեսությունից ներգրավված ավանդների և տրամադրված վարկերի ծավալները և տոկոսադրույքները

Բանկերի և վարկային կազմակերպությունների կողմից տրամադրված վարկերի տոկոսադրույքներն ըստ մարզերի

Պետական կարճաժամկետ պարտատոմսերի առաջնային տեղաբաշխման ծավալները և եկամտաբերությունը

Պետական միջին ժամկետայնության արժեկտրոնային պարտատոմսերի առաջնային տեղաբաշխման ծավալները և եկամտաբերությունը

Պետական երկարաժամկետ արժեկտրոնային պարտատոմսերի առաջնային տեղաբաշխման ծավալները և եկամտաբերությունը

ՊՊ երկրորդային շուկայում իրականացված գործառնությունները

Պետական (Գանձապետական) պարտատոմսերում ներդրողների կառուցվածքը

ՀՀ եվրոպարտատոմսերով երկրորդային շուկայում իրականացված գործառնությունները

ՀՀ ԿԲ կողմից արժութային շուկայում իրականացված գործառնությունները

Արժութային շուկայում իրականացված գործառնությունները

ՀՀ ֆոնդային բորսայում արտարժութային գործառնությունների ծավալները

Արժութային շուկայում ձևավորված ՀՀ դրամ/ԱՄՆ դոլար միջին փոխարժեքը

Արժութային շուկայում ձևավորված ՀՀ դրամ/եվրո միջին փոխարժեքը

Արժութային շուկայում ձևավորված ՀՀ դրամ/ՌԴ ռուբլի միջին փոխարժեքը

Վարկային ներդրումներ 86

Առևտրային բանկերի վարկերն ըստ տնտեսության հատվածների

Առևտրային բանկերի վարկային ներդրումներն ըստ ժամկետայնության
Առևտրային բանկերի վարկային գործառնությունների գործիքակազմը
Առևտրային բանկերի կողմից ռեզիդենտներին տրամադրված վարկերի ճյուղային կառուցվածքը
Առևտրային բանկերի չաշխատող ակտիվների տեսակարար կշիռն ըստ ոլորտների
ՀՀ առևտրային բանկերի ընդհանուր միջբանկային վարկերը
Վարկային կազմակերպությունների վարկերն ըստ տնտեսության հատվածների
Վարկային կազմակերպությունների վարկային ներդրումներն ըստ ժամկետայնության
Վարկային կազմակերպությունների այլ վարկային գործառնությունների գործիքակազմը
Վարկային կազմակերպությունների կողմից ռեզիդենտներին տրամադրված վարկերի ճյուղային կառուցվածքը
Առևտրային բանկերի ավանդներ 96
Առևտրային բանկերի ավանդներն ըստ տնտեսության հատվածների
Ֆինանսական կազմակերպությունների հիմնական ցուցանիշներ 98
Ֆինանսական կազմակերպությունների քանակը և կառուցվածքը
ՀՀ բանկերի հիմնական ցուցանիշները և դրանց փոփոխությունը
ՀՀ առևտրային բանկային հիմնական տնտեսական նորմատիվների մեծությունը
ՀՀ վարկային կազմակերպությունների հիմնական ցուցանիշները և դրանց փոփոխությունը
Վարկային կազմակերպությունների ընդհանուր կապիտալի համարժեքության նորմատիվի մեծությունը
ՀՀ ապահովագրական ընկերությունների հիմնական ցուցանիշները և դրանց փոփոխությունը
Գործող ապահովագրական ընկերությունների գործունեության հիմնական ցուցանիշներն ըստ ապահովագրության դասերի
Պարտադիր կենսաթոշակային ֆոնդերի հիմնական ցուցանիշներ
Ներդրումային ծառայություններ մատուցող ընկերությունների հիմնական ցուցանիշներ
Ներդրումային ծառայություններ մատուցող անձանց կողմից կնքված գործարքներ
Կառավարման վերցված միջոցներ
Պահառության վերցված արժեթղթեր
ՀՀ վճարահաշվարկային կազմակերպությունների հիմնական ցուցանիշները և դրանց փոփոխությունը
Գրավատների ցուցանիշներ
Արտարժույթի փոխանակման կետերի կողմից իրականացված գործառնություններ
Վճարահաշվարկային համակարգ 107
Կենտրոնական բանկի վճարահաշվարկային համակարգերով կատարված դրամական փոխանցումներ
ՀՀ տարածքում անկանխիկ վճարային գործիքներով բանկային համակարգում իրականացված փոխանցումներ
ՀՀ առևտրային բանկերի և օտարերկրյա բանկերի կողմից թողարկված վճարային քարտերով իրականացված գործառնությունները ՀՀ տարածքում ըստ սպասարկման միջոցների
ՀՀ բանկերի կողմից թողարկված քարտերով իրականացված գործառնություններն արտասահմանում
Հաճախորդների և նրանց բանկային հաշիվների քանակը

ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

Ամվանում	2017 թ. նոյեմբեր	2017 թ. նոյեմբերի իրական աճի փոփոխությունը 2016 թ. նոյեմբերի նկատմամբ (%)	2017 թ. դեկտեմբեր	2017 թ. դեկտեմբերի իրական աճի փոփոխությունը 2016 թ. դեկտեմբերի նկատմամբ (%)
Տնտեսական ակտիվության ցուցանիշը		8.6[1]		12.6
Արդյունաբերական արտադրանքի ծավալը *(մլն ՀՀ դրամ)*	153044.9	11.0	169619.8	15.6
Գյուղատնտեսության համախառն արտադրանքը *(մլն ՀՀ դրամ)*	77519.1[1]	-0.5[1]	91693.0	3.3
Շինարարության ծավալը *(մլն ՀՀ դրամ)*	49746.7	6.9	91315.2	10.4
Առևտրի շրջանառության ծավալը *(մլն ՀՀ դրամ)*	241769.4[1]	22.4[1]	333636.7	12.7
Ծառայությունների ծավալը *(մլն ՀՀ դրամ)*	129020.8	17.6	142327.1	15.6
Էլեկտրաէներգիայի արտադրությունը *(մլն կՎտ/ժամ)*	624.4	0.2	825.5	17.8
Մեկ աշխատողի միջին ամսական անվանական աշխատավարձը *(ՀՀ դրամ)*	191930[1]	3.8[2]	240277[3]	0.0[4]

ԳՆԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ

2017 թ.	Գնաճ	Արդյունաբերողների արտադրանքի գների փոփոխությունը	Կապիտալ շինարարությունում գների փոփոխությունը	Գյուղատնտեսական մթերքների իրացման գների փոփոխությունը
նախորդ ամսվա նկատմամբ (%)				
Հունվար	2.6	-0.1[1]	-0.7	3.2
Փետրվար	-0.9	0.3[1]	2.6	0.2
Մարտ	-0.3	-0.6	-2.3	-0.5
Ապրիլ	1.0	-0.6	0.8	-0.4
Մայիս	-0.2	0.2	0.5	-3.6
Հունիս	-0.9	0.5	0.9	-11.2
Հուլիս	-2.6	0.1	-0.2	-22.0
Օգոստոս	-0.4	0.9	1.2	-20.2
Սեպտեմբեր	0.2	0.1	0.8	-13.7
Հոկտեմբեր	0.8	0.9	3.2	7.8
Նոյեմբեր	2.0	0.7	-0.3	4.7
Դեկտեմբեր	1.5	0.8	0.2	4.5
2017 թ. հունվար – դեկտեմբերը 2016 թ. հունվար – դեկտեմբերի նկատմամբ	1.0	3.9	0.2	0.8

ԳՆԱՁ

ժամանակաշրջան	2015	2016	2017	2017	2017
	նախորդ ամսվա նկատմամբ (%)			նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ (%)	նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ (%)
Հունվար	2.5[1]	2.2	2.6	2.6	-0.6
Փետրվար	- 0.1[1]	-1.4	-0.9	1.7	-0.2
Մարտ	-0.1	-0.3	-0.3	1.4	-0.1
Ապրիլ	-0.4	-0.3	1.0	2.4	1.2
Մայիս	-0.5	-0.7	-0.2	2.1	1.6
Հունիս	-1.4	-0.5	-0.9	1.2	1.1
Հուլիս	-2.2	-2.3	-2.6	-1.4	0.9
Օգոստոս	0.1	-0.5	-0.4	-1.8	0.9
Սեպտեմբեր	0.1	0.1	0.2	-1.7	1.0
Հոկտեմբեր	-0.4	0.5	0.8	-0.9	1.2
Նոյեմբեր	0.6	1.0	2.0	1.1	2.2
Դեկտեմբեր	1.7	1.1	1.5	2.6	2.6
Տարեկան *(նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ)*	-0.1	-1.1	2.6		
Տարեկան *(նախորդ տարվա նկատմամբ)*	3.7	-1.4	1.0		

ՀԻՄՆԱԿԱՆ ԱՊՐԱՆՔԱՄԻՄԲԵՐԻ ՆՊԱՍՏՈՒՄԸ ԳՆԱՁԻՆ[5]

Անվանում	2017 թ. դեկտեմբերը 2017 թ. նոյեմբերի նկատմամբ (%)	Նպաստումը գնաճին (տոկոսային կետ)
Գնաճ	**1.5**	
Սննդամթերք և ոչ ալկոհոլային խմիչք	3.6	1.48
Ալկոհոլային խմիչք, ծխախոտային արտադրատեսակներ	0.0	0.00
Հագուստ և կոշիկ	-0.8	-0.03
Կենցաղային ծառայություններ, ջուր, էլեկտրաէներգիա, գազ և վառելիքի այլ տեսակներ	0.2	0.03
Տնային գործածության առարկաներ, կենցաղային տեխնիկա և բնակարանների խնամքի ամենօրյա գործունեություն	0.5	0.02
Առողջապահություն	0.1	0.01
Տրանսպորտ	0.0	0.00
Կապ	0.0	0.00
Հանգիստ և մշակույթ	1.2	0.01
Կրթություն	0.0	0.00
Ռեստորաններ և հյուրանոցներ	0.2	0.00
Տարբեր ապրանքներ և ծառայություններ	0.2	0.01

ԲՆԱԿԱՆՈՆ ԳՆԱՀ[6]

ժամանակաշրջան	2015	2016	2017
նախորդ ամսվա նկատմամբ (%)			
Հունվար	0.94[2]	0.02[2]	-0.01[2]
Փետրվար	0.21[2]	-0.09	-0.04
Մարտ	-0.09	-0.11	0.25
Ապրիլ	-0.39	-0.11	0.38
Մայիս	-0.14	-0.18	0.22
Հունիս	-0.41	-0.39	-0.02
Հուլիս	-0.56	-0.27	-0.10
Օգոստոս	-0.20	-0.02	0.35
Սեպտեմբեր	0.08	0.11	0.39
Հոկտեմբեր	0.28	0.38	0.83
Նոյեմբեր	-0.13	0.02	0.73
Դեկտեմբեր	-0.12	-0.20	0.27
նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ (%)			
Հունվար	3.82[2]	-1.05[2]	-1.61[2]
Փետրվար	4.45[2]	-1.39	-1.24
Մարտ	4.40	-1.47	-0.86
Ապրիլ	3.83	-1.31	-0.30
Մայիս	3.50	-1.35	0.26
Հունիս	3.26	-1.45	0.68
Հուլիս	2.42	-1.23	0.89
Օգոստոս	1.93	-1.10	1.35
Սեպտեմբեր	1.55	-1.12	1.63
Հոկտեմբեր	1.35	-1.06	1.91
Նոյեմբեր	0.74	-0.92	2.78
Դեկտեմբեր	-0.54	-0.97	3.31

ԲՆԱԿԱՆՈՆ ԳՆԱՀԻՆ ԱՄԵՆԱՄԵԾ ՆՊԱՍՏՈՒՄՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՊՐԱՆՔԱՏԵՍԱԿՆԵՐԸ[6]

Անվանում	Նպաստումը բնականոն գնաճին (տոկոսային կետ)
նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ	
Բնականոն գնաճ. այդ թվում՝	**3.31**
Միս տավարի	0.84
Օդային տրանսպորտի ուղեվարձ	0.40
Կարագ	0.38
Միս խոզի	0.25
Պանիր կովի կաթից	0.21
Հավի ձու	0.18
«Իշխան» ձուկ	0.16
Բենզին	0.10
Պանիր տնական	0.09
Ծխագլանակներ ֆիլտրով՝ հայրենական արտադրության	0.08
«Թառափ» ձուկ	0.08
Վիրահատական ծառայություններ	0.07
Բուսական յուղ արևածաղկի	-0.07
Շաքարավազ	-0.07
Հնդկացորեն	-0.10

[1] *Տվյալները վերանայվել են ՀՀ ԱՎԾ կողմից:*
[2] *Ըստ ՀՀ ԿԲ հաշվարկների՝ ՀՀ ԱՎԾ վերանայված տվյալների հիման վրա:*
[3] *Ըստ ՀՀ ԱՎԾ նախնական տվյալների:*
[4] *Ըստ ՀՀ ԿԲ հաշվարկների՝ ՀՀ ԱՎԾ նախնական տվյալների հիման վրա:*
[5] *Ըստ ՀՀ ԿԲ հաշվարկների՝ ՀՀ ԱՎԾ տվյալների հիման վրա:*
[6] *Արտաքսման և ճշգրտման եղանակով հաշվարկված:*

ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԱՐՏԱՀԱՆՈՒՄ ԵՎ ՆԵՐՄՈՒԾՈՒՄ

Ամվաճում	2017 թ. հունվար – նոյեմբեր (մլն ԱՄՆ դոլար)	2017 թ. հունվար – նոյեմբերը 2016 թ. հունվար – նոյեմբերի նկատմամբ (%)	2017 թ. հունվար – դեկտեմբեր (մլն ԱՄՆ դոլար)	2017 թ. հունվար – դեկտեմբերը 2016 թ. հունվար – դեկտեմբերի նկատմամբ (%)
Արտահանում *(ՖՕԲ)*	2013.8	123.5	2242.9	125.2
Ներմուծում *(ՍԻՖ)*	3770.4	128.0	4182.7	127.8
Առևտրային հաշվեկշռի պակասուրդ	1756.6	133.5	1939.8	130.9

ԸՍՏ ԵՐԿՐՆԵՐԻ ՀՀ ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԻՋՈՑՈՎ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՓՈԽԱՆՑՈՒՄՆԵՐԸ

հազար ԱՄՆ դոլար

Երկիր	2016 թվական					
	Դեկտեմբեր			Հունվար – դեկտեմբեր		
	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք
Ռուսաստանի Դաշնություն	94136	27937	66200	896916	333400	563516
ԱՄՆ	19364	7790	11574	176569	83862	92707
Ուկրաինա	928	986	-58	9298	10705	-1407
Ղազախստան	1717	229	1488	18894	4368	14526
Գերմանիա	4012	1796	2216	52134	23776	28358
Իսպանիա	830	1191	-362	8839	12544	-3705
Ֆրանսիա	2996	1430	1566	30365	14589	15776
ԱՄԷ	2401	2032	369	19509	22896	-3386
Չինաստան	655	6403	-5747	2939	56629	-53690
Թուրքիա	234	957	-723	2517	8154	-5637
Այլ երկրներ	84300	58276	26024	314903	246058	68845
Ընդամենը	**211572**	**109025**	**102547**	**1532883**	**816982**	**715901**

հազար ԱՄՆ դոլար

Երկիր	2017 թվական					
	Դեկտեմբեր			Հունվար – դեկտեմբեր		
	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք
Ռուսաստանի Դաշնություն	120287	39610	80677	1064984	376132	688853
ԱՄՆ	23205	31726	-8521	183253	196322	-13068
Ուկրաինա	988	1540	-552	9102	13649	-4547
Ղազախստան	2028	217	1811	46839	2625	44214
Գերմանիա	3462	1922	1540	38568	28866	9702
Իսպանիա	988	1013	-25	9891	19387	-9496
Ֆրանսիա	2901	1597	1304	26291	15427	10864
ԱՄԷ	2635	2306	328	27105	21393	5712
Չինաստան	335	6530	-6195	4454	64710	-60257
Թուրքիա	221	1376	-1155	1446	10306	-8860
Այլ երկրներ	37906	27575	10331	344550	276176	68374
Ընդամենը	**194957**	**115414**	**79543**	**1756485**	**1024993**	**731492**


ԸՍՏ ԵՐԿՐՆԵՐԻ ՀՀ ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԻՋՈՑՈՎ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՓՈԽԱՆՑՈՒՄՆԵՐԸ


մլն ՀՀ դրամ

Երկիր	2016 թվական					
	Դեկտեմբեր			Հունվար – դեկտեմբեր		
	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք
Ռուսաստանի Դաշնություն	45470	13493	31977	429938	160260	269678
